

ՀՀ Կրթության և Գիտության Նախարարություն  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
Աստվածաբանության ֆակուլտետ

## ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թ Ե Մ Ա`

Արևելքի Ասորական Եկեղեցու պատարագի աստվածաբանությունը  
(քննական-համեմատական վերլուծություն)

4-րդ կուրսի ուսանող` Ն. Յուխանաս  
Գիտ. դեկավար` պ.գ.թ.` Ա. Օհանջանյան

Երևան – 2011

Ներածություն .....	3
Գլուխ I. Նախագիտելիք Արևելքի Ասորական Եկեղեցու մասին.....	6
1.1 Համառոտ ակնարկ Արևելքի Ասորական Եկեղեցու պատմության մասին.....	6
1.2 Արևելքի Ասորական եկեղեցու ճարտարապետությունը.....	11
Գլուխ II. Արևելքի Ասորական Եկեղեցու պատարագի աստվածաբանությունը.....	14
Գլուխ II. Արևելքի Ասորական Եկեղեցու պատարագի աստվածաբանությունը.....	14
2.1 Երախաների պատարագ.....	14
ա. Մար Ադդայ և Մար Մարի առաքյալների պատարագի պատմությունն ու կառուցվածքը.....	14
բ. Ընծաների պատրաստում և հոգևոր դասի հանդերձավորում .....	16
գ. Պաշտամունքի սկիզբ.....	23
դ. Սուրբ Գրքի ընթերցումներ .....	26
ե. Մարկավագի քարոզն ու ընծաների դնելը Սուրբ Սեղանի վրա .....	30
զ. Նիկիական հավատո հանգանակը՝ որպես պատարագի բաղադրիչ մաս.....	33
2.2 Հավատացյալների պատարագ.....	37
ա. Աստվածապաշտության ձևեր Արևելքի Ասորական եկեղեցում .....	37
բ. Ողջույն.....	39
գ. Ընծաների սրբագործում .....	40
դ. Ընծաների Բեկում .....	42
ե. Խոստովանություն.....	45
զ. Հաղորդություն .....	46
է. Գոհություն և արձակում.....	47
Վերջաբան .....	50
Օգտագործած գրականության ցանկ.....	52

## Ներածություն

Պատարագ նշանակում է զոհ, նվեր, ընծա: Զոհաբերվողը Հիսուս Քրիստոսն է, որ յուրաքանչյուր Պատարագի ժամանակ որպես բանական զոհ ընծայվում է Աստծուն՝ մարդկանց մեղքերի քավության և թողության համար: Պատարագի ժամին Եկեղեցին ավելի առարկայորեն, ավելի ընկալելի դառնում է Երկինք երկրի վրա: Եկեղեցում հավաքվում և սրբազան Խորհրդին մասնակցում են ոչ միայն ժողովուրդը և հոգևորականները, այլև, մի խորհրդավոր ներկայությամբ, Սուրբ Երրորդությունը, սուրբ Կույսը, հրեշտակների և սրբերի դասերը: Երկնային նվիրապետությունը մեկտեղվում է երկրայինի հետ: Մեկ խոսքով՝ Պատարագը Աստծու հավերժական Միրո արտահայտությունն է հանդեպ Իր արարչագործությունը և նրա պսակը՝ մարդը, և այդ սիրուց իրենց մասն ունեն բոլորը. թե՛ Հաղթանակած Եկեղեցին (ննջեցյալները), թե՛ Մարտնչող Եկեղեցին (ողջերը): Պատարագի առանցքը և բուն խորհուրդը սուրբ Հաղորդությունն է, որը հաստատել է Հիսուս Քրիստոս Վերջին (Խորհրդավոր) ընթրիքի ժամանակ (Մատթ. ԻԶ:ԺԶ-Լ, Մարկ. ԺԴ:ԺԲ-ԻԵ, Ղուկ. ԺԲ:Է-ԻԳ, Յովհ. ԺԳ:ԻԱ-Լ, Ա Կորնթ. ԺԱ:ԻԳ-ԻԵ) : Այս խորհրդի կատարումով է, որ մկրտված քրիստոնյան, արժանավորապես ճաշակելով սրբագործված հացն ու գինին (Քրիստոսի Մարմինն ու Արյունը), մերձենում և միանում է Աստծուն: Իսկ ընդհանուր առմամբ Պատարագը բովանդակում է Հիսուսի մարդեղության ողջ խորհուրդը և Նրա բոլոր փրկագործական տնօրինությունները՝ Ծնունդից մինչև Համբարձում և Հոգեգալուստ, որը բուն ծեսի մեջ առարկայանում է խորհրդապաշտական գործողություններով, աստվածաշնչական ընթերցումներով, սաղմոսների ու շարականների կատարմամբ, խրատներով, քարոզներով ու աղոթքներով: Որպես բոլոր առաքելահաստատ եկեղեցիների գլխավոր պաշտամունքային արարողություն՝ Պատարագը արտացոլում է քրիստոնեական աստվածհայեցողության, աստվածճանաչողության ու աստվածպաշտության գլխավոր ընկալումներն ու նպատակները<sup>1</sup>:

Հաղորդության Խորհուրդը հնուց ի վեր մնացած բոլոր Խորհուրդների համեմատ համարվում է Խորհուրդների խորհուրդ: Եկեղեցու բուն էությունը

<sup>1</sup> Արճիշեցի Հ., Մեկնություն պատարագի, Էջմիածին, 1999, էջ 5-6:

Եվխարիստիկ է, և դրա համար առանց Հաղորդության չկա Եկեղեցի և առանց Եկեղեցու չի կարող լինել Հաղորդություն: Եվխարիստիկ կանոնի ձևերի բազմազանությունը վկայում է այն մասին, որ «Զի հողմ՝ ուր կամի շնչե...» (Յովհ.Գ:Ը)<sup>2</sup>:

Պատարագների տիպերի դասակարգումը հիմնվում է *անաֆորաների* (պատարագի կենտրոնական աղոթք) տիպերի դասակարգման վրա: Դեռևս XVII-XIXդդ.-ի պատարագագետները *անաֆորան* պայմանականորեն բաժանեցին մասերի, որոնք հետևյալն են. **ներածական երկխոսություն** (Տիրոջ շնորհը... կամ Տերը ձեզ հետ - և քո հոգու հետ...), այնուհետև **“praefatio”** (շնորհակալական խոսքեր, արարչագործության և փրկության նախախնամության մասին ակնարկներ), **“Sanctus”** (Սուրբ, Սուրբ, Սուրբ է գորությունների Տերը: Լի են երկինքն ու երկիրը նրա փառքով...), **“institutio”** (վերջին ընթրիքի և Հաղորդության Խորհրդի հաստատման մասին՝ «Առե՛ք, կերե՛ք և խմե՛ք դրանից բոլորդ...» բառերի օգտագործումը պատարագի ժամանակ), **“anamnesis”** (հիշատակումներ), **“epiclesis”** (Սուրբ Հոգի կանչելը) **“intercessio”** (ողջերի և ննջեցյալների, Եկեղեցու և աշխարհի կարիքների մասին աղոթքներ):

Քանի որ ոչ բոլոր հայտնի *անաֆորաների* ձևերի մեջ են առկա վերոնշյալ մասերը, ապա այդ մասերի հաջորդականության համաձայն ընդունված է այս կամ այն անաֆորան վերագրել տվյալ պատարագների ընտանիքին: Այսպես, արևելքում անաֆորաների հիմնական ձևերն են **ալեքսանդրյան, անատոլիական և արևելա-ասորական:**

Ալեքսանդրյան տիպին են վերագրվում հենց ալեքսանդրյան, ինչպես նաև Եթովպական եկեղեցու *անաֆորաները*: Այս *անաֆորաները* բաղկացած են հետևյալ մասերից. ներածական երկխոսություն, praeconium (փառաբանություն) I, intercessio, Sanctus, praeconium II, institutio, anamnesis, epiclesis, եզրափակիչ փառաբանություն և ամեն:

*Անաֆորաների* այն տեսակները, որոնք դասվում են երուսաղեմա-անտիոքյան տիպին ժամանակակից պատարագագետների կողմից դասվում են անատոլիական տիպին, որը բաժանվում է մի քանի ճյուղերի՝ բյուզանդական ձեսի *անաֆորաներ*,

<sup>2</sup> Карабинов И. А., “Собрание древних литургий”, Москва, 2007,с.5

երուսաղեմյան, արևմտա-ասորական (Հակոբիկյան եկեղեցու կողմից կիրառվող, 80-ի հասնող), անատոլիական տիպի ալեքսանդրյան *անաֆորաներ* (Բարսեղ Մեծի և Գրիգոր Աստվածաբանի *անաֆորաների* եզիպտական տարբերակ) և հայկական *անաֆորա*: Այս *անաֆորաների* բաղկացուցիչ մասերն են. ներածական երկխոսություն, praefatio, Sanctus, post- Sanctus աղոթք, institutio, anamnesis, epiclesis, intercessio, եզրափակիչ փառաբանություն և ամեն:

Իսկ այն *անաֆորաները*, որոնք դասվում են միջագետքյան դասին, ուսումնասիրողները վերագրում են արևելա-ասորական տիպին: Դրանցից են Ադդայ և Մարի առաքյալների *անաֆորան*, Թեոդորոս Մոփսուեստացու և այլն: Դրանց սխեման հետևյալն է. ներածական երկխոսություն, praefatio, Sanctus, post- Sanctus, anamnesis, intercessio, epiclesis, եզրափակիչ փառաբանություն և ամեն<sup>3</sup>:

Այս աշխատանքի բուն նպատակն է ներկայացնել և քննել Արևելքի Ասորական եկեղեցու պատարագի աստվածաբանությունը ու դրա հետ մեկտեղ համեմատել այն մնացած եկեղեցիների (մասնավորապես Հայ Առաքելական եկեղեցու) պատարագի հետ՝ հիմք ունենալով տվյալ եկեղեցիների սրբազան Ավանդությունը: Սակայն մինչ կծանոթանանք Ասորական Եկեղեցու պատարագին, հարկ ենք համարում համառոտ պատմական ակնարկ ներկայացնել Արևելքի Ասորական Եկեղեցու վերաբերյալ: Որպեսզի պարզ ու պատկերավոր լինի, թե ինչպիսի ճարտարապետական առանձնահատկություններ ունի Արևելքի Ասորական Եկեղեցին, առաջին գլխում զետեղել ենք նաև այս եկեղեցու ճարտարապետությունն ու կառուցվածքը: Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է Ասորական Եկեղեցու պատարագի պատմությանը, կառուցվածքին և աստվածաբանությանը, որտեղ փորձ է արվում քննել ու գտնել տարբերություններ և նմանություններ ընծաների պատրաստման, հոգևոր դասի հանդերձավորման, պաշտամունքի սկզբի, Սուրբ Գրքի ընթերցումների, սարկավագի քարոզների ու Սուրբ Ընծաների՝ Սեղանի վրա դնելու, աղոթքի ձևերի, հավատո հանգանակի, ողջույնի, ընծաների սրբագործման, ընծաների բեկման, խոստովանության, հաղորդության, գոհության աղոթքների ու արձակման մեջ Արևելքի Ասորական և Հայ Առաքելական եկեղեցիների ծիսակարգերում:

<sup>3</sup> Карабинов И. А., “Собрание древних литургий”, Москва, 2007, с. 7-9

# Գլուխ I. Նախագիտելիք Արևելքի Ասորական Եկեղեցու մասին

## 1.1 Համառոտ ակնարկ Արևելքի Ասորական Եկեղեցու պատմության մասին

Ժամանակակից քրիստոնեական եկեղեցին ներառում է իր մեջ բազմաթիվ ճյուղավորումներ, որոնք ծագել են երկու հազար տարվա ընթացքում: Դրանց անընդհատ բաժանումները շարունակում են լինել քրիստոնեական եկեղեցու պատմության հիմնական խնդիրներից մեկը: Արևելյան քրիստոնեության ճյուղերից մեկն է Արևելքի Ասորական Եկեղեցին: Գիտական գրականության մեջ հանդիպում են այս եկեղեցու նաև ուրիշ անվանումներ, ինչպիսիք են՝ Պարսկական, Միջագետքյան, Նեստորական, որոնք ներկայում ավելի քիչ կիրառական են: Մի քանի դարերի ընթացքում քրիստոնեական աշխարհի մեծամասնությունը կազմող Արևելքի Ասորական Եկեղեցու պատմությունը մինչև վերջին ժամանակները մնում էր համարյա անհայտ: Այս փաստն ամենից առաջ պայմանավորված է արևելյան ու արևմտյան ճյուղերի երկկողմանի մեկուսացմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ դրանցից յուրաքանչյուրը ծագել է մեկ ընդհանուր աղբյուրից՝ վարդապետությունից, որը շարադրված էր արամերեն լեզվով<sup>4</sup>: Այս մեկուսացման անխուսափելի լինելը կարող է բացատրվել նաև ուրիշ պատճառներով՝ մասնավորապես որոշակի քաղաքական դիրքորոշմամբ, որը զբաղեցրել էին հռոմեա-բյուզանդական կայսրերը Արևելքի Ասորական Եկեղեցու նկատմամբ, որովհետև վերջինս հրաժարվում էր ընդունել կայսերական դավանանքը, որի արդյունքում էլ այն ստացավ «նեստորական» անունը:

---

<sup>4</sup> Արամերենը դա սեմական ցեղ հանդիսացող արամեացիների լեզուն է: Վերջիններս եկել են Սիրիա և Հյուսիսասյին Միջագետք մ.թ.ա I հազարամյակի վերջերին: Հայտնի արևելագետ-լեզվաբան Ի.Դյակոնովի դասակարգմամբ արամերեն լեզուն ձևավորում է առանձին ենթախումբ սեմական լեզուների ընտանիքում: Արամերեն ենթախմբում առանձնացվում են մ.թ.ա IX-VII դդ. արձանագրությունների հինարամերեն լեզուն, մ.թ.ա VI-IV դդ. արեմեյանների պաշտոնական արքունական լեզուն հանդիսադոց «կայսերական արամերենը» և բազմաթիվ արամեական բարբառներ, որոնք միանում են *արևմտյան* (պալմիրյան, նաբատեական, հրեա-պաղեստինյան, սամարյան) *արևելյան* (դասական ասորերեն կամ էդեսերեն, IV-VI դդ. բաբելոնյան Թալմուդի լեզուն, ժամանակակից ասորերենը): Տե՛ս Ушанова Л., Музыкальные стили чинопоследования литургии Аддая и Мари в Ассирийской Церкви Востока, Вестник РАМ им. Гнесиных, 2009 №2 стр. 9

Արևելքի Ասորական Եկեղեցին ծնվեց քրիստոնեության առաջին դարերում Միրիայի և Միջագետքի արամեախոս<sup>5</sup> քրիստոնյաների շրջանում, որոնք աշխարհաքաղաքական առումով բաժանված էին երկու հզոր տերությունների՝ Հռոմի և Պարսկաստանի միջև: Համաձայն այս եկեղեցու սրբազան ավանդության՝ առաքյալներ Պետրոսը, Թովմասը, Թադեոսը և Բարդուղիմեոսը տարբեր ժամանակահատվածում քարոզել են Օսրոյենայում, որտեղից էլ հետագայում Թովմաս առաքյալը քրիստոնեության ավետիսը հասցրել է մինչև Հնդկաստան: Բայց Ասորական Եկեղեցու հիմնադրման գործում ամենամեծ տեղը հատկացված է Թովմաս առաքյալին: Հենց նրանից և նրա քարոզչությունից է սկսվում եկեղեցու պատմությունը (35-37թթ.)<sup>6</sup>: Ասորական Եկեղեցու կազմավորման գործում մեծ տեղ է հատկացվում նաև Մար Ադդայ (հայկական ավանդության մեջ Թադեոս առաքյալ) առաքյալին «72 առաքյալների» թվից, որը քարոզել է 37-65թթ. հյուսիսային Միջագետքում: Վերջինիս անվան հետ է կապված Օսրոյենա փոքրիկ ասորական պետության մայրաքաղաք Եդեսիայում (ասոր՝ Ուռհայ ,ܘܪܗܝ) քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն Աբգար V Ուքքամա արքայի օրոք: Փաստորեն, արդեն II – III դարերում ժամանակակից ասորիների նախնիների մեծամասնությունը ընդունեցին քրիստոնեությունը, որպեսզի միանգամայն զերծ մնային ինչպես հունահռոմեական հեթանոսությունից Արևմուտքում, Միրիայում և Միջագետքի հյուսիսարևմտյան մասում, այնպես էլ զրադաշտականությունից, որն իշխում էր Արևելքում՝ Պարսկաստանում: Եկեղեցու պաշտոնական կենտրոնը դարձավ պարթևական կայսրության մայրաքաղաք Սելևկիա-Կոտեսիֆոնի համայնքը (այժմ Բաղդադ)<sup>7</sup>: Սկզբնական շրջանում Արևելքում քրիստոնեությունը զարգանում ու

<sup>5</sup> Մասնագետները ենթադրում են, որ Միջագետքյան քաղաքակրթության բուն ներկայացուցիչները, այն է՝ ասորիները, արամեացիներն ու բաբելացիները, իրենց պետականության բացակայության պայմաններում, ինտենսիվորեն ձուլվել են իրար մեջ: Եվ այսպես ձևավորվեց մի հասարակություն, որը պայմանականորեն կարելի է անվանել սեմական ծագման արամեախոս զանգվածներ : Հենց այդ զանգվածներն էին առաջինները, որոնք միանգամից ընկալեցին քրիստոնեական ուսմունքը, երբ այն եկավ պատմության թատերաբեմ: Տե՛ս Пигулевская Н. В., Культура сирийцев в средние века, Москва, 1979, стр.107

<sup>6</sup> Baumer Ch., The Church of the East. An illustrated history of Assyrian christianity, London, 2004, P. 35

<sup>7</sup> Համաձայն «Ադդայի վարդապետություն» բնագրի՝ Սելևկիա-Կոտեսիֆոնում (Տիգրոն) բուռն քարոզչություն է արել Ադդայի աշակերտ Մարին, որի անվան հետ նույնպես կապվում է ասորիների շրջանում քրիստոնեության քարոզչությունը: Տե՛ս ABBELOOS, Acta S. Maris, 1885; DUVAL, R., La litte ´ rature syriaque.-Paris, 1900, pp. 117ff.

տարածվում էր բավականին խաղաղ պայմաններում, եթե համեմատելու լինենք հռոմեական Արևմուտքում մեր թվարկության առաջին հարյուրամյակներում տեղի ունեցող քրիստոնյաների հալածանքները: Սակայն, Եդեսիայի քաղաքական անկախության կորուստի հետ՝ 216թ., և Պարսկաստանում Սասանյանների՝ իշխանության գլուխ գալու հետ (226թ.) Արևելքում քրիստոնյաների կյանքում սկսվեցին հալածանքների ծանր ժամանակներ: Քանի որ Պարթևստանի, իսկ հետագայում Պարսկաստանի տիրապետող կրոնը զրադաշտականությունն էր, տերության ղեկավարները կասկածանքով էին վերաբերվում քրիստոնյաներին: Շահնշահների կողմից հովանավորվող ժողովրդական զանգվածները ժամանակ առ ժամանակ իրականացնում էին քրիստոնյաների ջարդեր: Այդ հալածանքները սկսվեցին դեռևս Բահրամ II արքայի (276-293թթ.) օրոք, բայց ուժեղացան և տևեցին 40 տարի Շապուհ II արքայի օրոք 339թ.-ից մինչև նրա մահը՝ 379թ. Պարսկաստանի ամբողջ տարածքով: Այսպես, չնայած հալածանքներին՝ IV դարում միանգամից «երեք արև» շողացին երկնակամարում: Դրանք էին սուրբ Հակոբ Մծբնեցին (†338թ.), նրա աշակերտ Եփրեմ Ասորին (†373թ.) և Սուրբ Եփրահատը (†345թ.), որին անվանում էին նաև «պարսկական իմաստուն»<sup>8</sup>:

310թ. Կոնստանտինի եպիսկոպոսը միացրեց քրիստոնեական համայնքները առաքելական օրինակով՝ դրանով հանդերձ կենտրոնացրեց եկեղեցու իշխանությունն իր ձեռքերում և ընդունեց Արևելքի կաթողիկոս տիտղոսը: 410թ.-ի եկեղեցու տեղական ժողովում կաթողիկոսն ընդունեց նաև նոր տիտղոս՝ պատրիարք:

Սկզբնական շրջանում Արևելքի Եկեղեցին Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի մասն է եղել: Սակայն քաղաքական պայմանները, որոնց մեջ էր գտնվում այդ եկեղեցին II-III հարյուրամյակներում, չափազանց բարդացնում և երբեմն էլ անհնարին էին դարձնում նրա կապը «Արևմուտքի» հետ, այսինքն՝ հունահռոմեական քրիստոնեական աշխարհի հետ: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Միջին Արևելքի և Անդրկովկասի համար մղվող պայքարը լուրջ խոչընդոտ հանդիսացավ կայսրության մյուս եկեղեցիների հետ կապ հաստատելու համար: Իսկ

<sup>8</sup> Селезнев Н. Н., Ассирийская Церковь Востока, исторический очерк, Москва, 2003, стр. 48



հետագայում երկու կողմերի միջև ծայր առան նաև քրիստոսաբանական վեճեր, որի պատճառը եղավ Կ. Պոլսի պատրիարք Նեստորի նգովումը Եփեսոսի Տիեզերաժողովում, ինչն անընդունելի էր Ասորական Եկեղեցու կողմից: Նեստորը Անտիոքի աստվածաբանական մտքի սկանավոր ներկայացուցիչներից էր: Վերջինիս նգովվելուց հետո միաբնակների հովանավոր Ջենոն (474-496թթ.) կայսեր հալածանքներից խուսափելու համար Նեստորի շատ հետևորդներ լքեցին կայսրության սահմանները և ապաստան գտան Պարսկական տիրապետության տարածքում գտնվող տեղական քրիստոնեական Եկեղեցում, որն անձանոթ էր արևմտյան եղբայրների աստվածաբանական վիճաբանությունների նրբություններին: Դրա համար, Արևելքի Եկեղեցին, որի կենտրոնը գտնվում էր պարսկական Կոնստանդնուպոլիսում (Տիգրան) քաղաքում, հեշտությամբ ընդունեց «նեստորական» (հինանտիոքյան) աստվածաբանական վարդապետությունը: Ասորական Եկեղեցին հերետիկոսության նշույլներ չտեսավ Նեստորի վարդապետության մեջ, քանի որ այն մեծ մասամբ չէր հակասում Արևելքի Ասորական Եկեղեցու հայրերի քրիստոսաբանությանը: Հետագայում Արևելքի Ասորական Եկեղեցին չընդունեց նաև Քաղկեդոնի ժողովի որոշումները՝ դրանով իսկ բաժանվելով մնացած քրիստոնեական եկեղեցիներից: Հետագա դարերում այս եկեղեցուն սկսեցին անվանել «նեստորական», որը սակայն անընդունելի է այն պարզ պատճառով, որ Նեստորը չէ, որ հիմնեց այդ եկեղեցին և նա չէր, որ նորամուծություն կատարեց Արևելքի Ասորական Եկեղեցու քրիստոսաբանության մեջ, այլ այդպիսի վարդապետություն ուներ այս եկեղեցին Նեստորի ծնունդից տասնյակ տարիներ առաջ<sup>9</sup>: Արևելքի Ասորական Եկեղեցին հերքում է այսպիսի անվանումը՝ առաջին հերթին ցույց տալով իր առաքելական ծագումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Նեստորի գրչին պատկանող «Հերակլիդեսի գիրքը» կոչվող ջատագովական երկի մեջ շարադրված վարդապետությունը չի համապատասխանում «նեստորական» կոչվող հերետիկոսությանը:

Չնայած այն հանգամանքին, որ Արևելքի Եկեղեցին գտնվում էր այլադավանների տիրապետության տակ, VII-XI դդ. իր աշխարհագրական

---

<sup>9</sup> St' u Wigram W. A., An introduction to the history of the Assyrian Church or Church of the Sassanid empire 100-640 A.D, London, 1909, p. 49

տարածքներով չէր զիջում որևէ եկեղեցու: Հաջող միսիոներական գործունեության շնորհիվ այն կարողացավ իր ազդեցությունը տարածել նաև ողջ Ասիայում՝ ներառյալ Հնդկաստանը, Սոնդոլիան և Չինաստանը այնտեղից էլ Ճապոնիա: Ծաղկման շրջանում հաշվվում էր ավելի քան 300 թեմ և 50 մետրոպոլիս: Սակայն XIV դարի վերջում Լենկթեմուրի կողմից կատարած ավերածությունների արդյունքում այդ եկեղեցու սաղմերը պահպանվեցին միայն լեոնային Քրդստանում (Հյուսիսային Իրաք), Սիրիայում, Թուրքիայում, Հնդկաստանում՝ Մալաբարի ծովեզերքին, Կիպրոսում և Սոկոտր կղզիներում և այլն: XVI դ. Օսմանյան կայսրության սահմաններում, որտեղ մեծ թիվ էին կազմում ասորիները, ներխուժեցին կաթոլիկ միսիոներներ և սկսեցին տեղի քրիստոնյաներին կաթոլիկ եկեղեցուն միացնել: Այսպիսով, 1551թ. Արևելքի Ասորական եկեղեցու մի մասն անջատվեց և ստեղծվեց Ասորական Ունիատ Բաբելոնի Քաղկեդոնական եկեղեցի<sup>10</sup>: Նշենք նաև, որ 1915թ.-ին մոտ 750000 ասորիներ հայերի, հույների և այլ քրիստոնյա ազգերի հետ ենթարկվեցին դաժան ցեղասպանության: Իսկ II համաշխարհային պատերազմի տարիներին շատ ասորիներ փախան ԱՄՆ, Եվրոպա և Ավստրալիա: Այժմ Արևելքի Ասորական եկեղեցու թեմեր կան աշխարհի շատ երկրներում, ինչպես օրինակ Իրաք, Սիրիա, Լիբանան, Պարսկաստան, Հնդկաստան, ԱՄՆ, Ավստրալիա և Նոր Զելանդիա, Կանադա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա, Հոլանդիա, Շվեդիա, Նորվեգիա, Դանիա, Հունգարիա, Հունաստան, ԱՊՀ երկրներ և այլն: Հնդկաստանի թեմը առնձնանում է այն բանով, որ այնտեղի քրիստոնյաները, լինելով ազգությամբ հնդիկ, հավատարիմ են մնացել Արևելքի Ասորական եկեղեցու ավանդությանը և ենթարկվում են Արևելքի Ասորական եկեղեցու կաթողիկոս-պատրիարքին: Հենց դրանով էլ ապացուցվում է Արևելքի Ասորական եկեղեցու Ընդհանրական (կաթողիկե) բնույթը: Այստեղի թեմը ունի մեկ մետրոպոլիտ և երկու եպիսկոպոս: 1976թ.-ից Արևելքի Ասորական եկեղեցու կաթողիկոս է Մար Դնիս IV:

<sup>10</sup> Селезнев Н. Н., Ассирийская Церковь Востока, исторический очерк, Москва, 2003, стр. 51

## 1.2 Արևելքի Ասորական Եկեղեցու Ճարտարապետությունը

Ասորական Եկեղեցու պատարագը ընթերցողին ավելի հասկանալի և պատկերավոր դարձնելու համար հարկ ենք համարում մի փոքր խոսել եկեղեցու II ճարտարապետության մասին, որը զգալիորեն տարբերվում է մնացած եկեղեցիների կառուցվածքից (Հայ Եկեղեցու ճարտարապետության հետ բաղդատելով):

Արևելքի Ասորական Եկեղեցու տաճարները կառուցվում են դեմքով դեպի արևելք: Եկեղեցու կառուցվածքը նման է երուսաղեմյան տաճարի նկարագրությանը: Խորանը տաճարից զատվում է 3 աստիճաններով ու բաժանվում 3 մասի: Կենտրոնում գտնվում է Սրբություն Սրբոցը (ܣܘܪܘܬܐ ܨܘܪܘܬܐ), հյուսիսում՝ ավանդատունը (սարկավագատուն), իսկ հարավում՝ մկրտատունը (ܡܝܬܘܬܐ ܕܥܒܘܕ): Սրբություն սրբոցի կենտրոնում գտնվում է պատին կպած Սուրբ Սեղանը (ܥܘܠܬܐ): Ասորերենից նշանակում է «գոհաբերության վայր», պատրաստվում է կավից կամ քարից, որոշ դեպքերում էլ փայտից և ծածկվում է զարդարված կտորներով: Սուրբ սեղանի վրա կա մեծ խաչ: Սկսած IX դարից Հայ եկեղեցին սկսել է օգտագործել Տիրամոր պատկերը Սուրբ սեղանի վերևում, բայց մինչ այդ գործաում էր միայն խաչ<sup>11</sup>:

Եկեղեցին չօժած լինելու պարագայում պատարագի ժամանակ Սուրբ սեղանի վրա դրվում է 2 տախտակ՝ ի նշանավորումն Մովսեսի պատվիրանների տախտակների, որոնք օգտագործվում են պատարագ մատուցելու համար չօժված եկեղեցիներում<sup>12</sup>: Հայ եկեղեցում էլ վիմաքարը ունի նման նշանակություն: Սուրբ Սեղանի վրա դրվում է նաև Ավետարան, փոքր ձեռքի խաչ, քահանայի պատարագամատույց և ծիսական երգերի ժողովածուն՝ *խուղղա* (ܡܘܠܬܐ) գիրքը: Ի տարբերություն հայ եկեղեցու՝ Սեղանի ետևից ազատ տարածություն չկա, որը հայ եկեղեցում օգտագործվում է վերաբերման, խնկարկությունների և սպասարկման համար:<sup>13</sup> Սրբություն սրբոցի կենտրոնում առաստաղից կախված է լինում կանթեղ (ܥܘܠܬܐ), որը ձեռով ճրագն է և խորհրդանշում է Աստծո ներկայությունը: Իսկ Հայ եկեղեցում կանթեղները կախվում են սեղանների կամ պատկերների առջև՝ որպես

<sup>11</sup> Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, Հատոր Ա, Բեյրութ, 1959, էջ 451

<sup>12</sup> Isaac J., La messe chaldeenne, etude historique, Bagdad, 1982, p. 35

<sup>13</sup> Տե՛ս Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992թ., էջ 88

պատիվ:<sup>14</sup> Բայց Ասորական Եկեղեցիներում պատկերներ չկան, քանի որ համաձայն այդ եկեղեցու ավանդության՝ արգելվում է պատկերների կիրառումը, որովհետև դա խախտում է II պատվիրանը (Ելք. Ի:Գ-Է): Սուրբ սեղանից աջ<sup>15</sup> գտնվում է գանձատունը (ՌՂ ձա), որը ժամանակին օգտագործվել է որպես տվյալ եկեղեցու թանկարժեք իրերի պահարան: Խորանի մեջ կողմնակի երկու պատերի մեջ մեկական խորշեր կան (ՌՆ), որոնցից աջում դրվում է գինով լցված սկիհը, իսկ ձախում՝ նշխարով մաղզման: Խորան մտնելը թույլատրվում է միայն ձեռնադրված անձանց, որոնք ծոմ են պահել տվյալ օրը: Ավանդատունը (ՂՈՐՆ ձա) սովորաբար տեղակայված է լինում խորանի հյուսիսային մասում՝ սուրբ սեղանի աջ կողմում, որն ունի մուտք դեպի խորան: Այն կոչվում է նաև սարկավագատուն: Այստեղ են գտնվում եկեղեցու սպասքը, հոգևորականների հանդերձանքը և մի փոքրիկ թոնիր՝ նշխարը թխելու համար: Մկրտատունը (ՌՄԾ ձա), ի տարբերություն Հայ Եկեղեցու, որն օգտագործում է որպես ավանդատուն<sup>16</sup> մկրտության ավազանով հանդերձ, որը գտնվում է աջակողմյան ավանդատան հյուսիսային պատի առջևում, Արևելքի Ասորական Եկեղեցում գտնվում է սուրբ սեղանի ձախակողմյան մասում, որում գտնվում է մկրտության ավազանը և օձման փոքր սեղանը: Մկրտատունը ի տարբերություն աջակողմյան ավանդատան՝ չունի մուտք դեպի խորան: Մկրտվողը եկեղեցու բակից մտնում է մկրտատուն և մկրտվելուց հետո նոր մտնում է եկեղեցի: Կատրոման (ՌՅՈՎՄՅ) խորանը տաճարից բաժանող 3 աստիճաններ են, որոնք խորհրդանշում են երկրային դրախտի և երկնքի կապը: Իսկ Հայ Եկեղեցում աստիճանների թիվը տատանվում է 3-7 ութ, որոնք գտնվում են խորանի աջ և ձախ կողմերում, որոնցից աջակողմյանը պատարագի ընթացքում ծառայում է բարձրանալու և իջնելու համար:<sup>17</sup> Ասորական Եկեղեցում թե՛ խորանը և թե՛ մկրտարանը ամբողջությամբ բաժանվում են գավթից

<sup>14</sup> Տե՛ս Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992թ., էջ 92

<sup>15</sup> Եկեղեցու աջն ու ձախը մեծ դռնով մտնողի աջքով չեն որոշում, այլ երեսով ժողովրդին դարձած սեղանը դիտվում է իբրև անձ ու նրա աջ ու ձախ կողմերով է որոշվում, որոնք մեծ դռնից մտնողի աջ ու ձախ կողմերին հակառակ է: Այլ բացատրությամբ, որովհետև եկեղեցիները միշտ դեպի արևելք են կառուցված, հետևաբար հյուսիսակողմը կլինի աջակողմյան, իսկ հարավակողմը՝ ձախակողմյան: Նույն տեղում, էջ 51

<sup>16</sup> Նույն տեղում էջ 53

<sup>17</sup> Նույն տեղում էջ 50

կամ աստյանից 3 աստիճաններով, իսկ Հայ Եկեղեցում աջ և ձախ ավանդատները խորանի բարձրության մակարդակի վրա չեն: *Շկակոնան* (𐎎𐎠𐎢𐎡) նեղ միջանցք է, որը միացնում է խորանը բեմի հետ: *Շկակոնայի* առկայությունը ասորական եկեղեցում համաձայնեցված է Մատթեոս ավետարանչի խոսքերին. «Մտեք ընդ նեղ դուռն, քանզի ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն որ տանի ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա» (Մտթ. Է:ԺԳ-ԺԴ): Բեմը (𐎎𐎠𐎢) կամ ամբիոնը բարձր մաս է, որը գտնվում է տաճարի կենտրոնում: Համաձայն ավանդության՝ բեմը նույնացվում է Երուսաղեմի հետ, որն ըստ Եզեկիելի երկրագնդի կենտրոնն է (Եզեկ Ե:Ե): Գողգոթան (𐎎𐎠𐎢𐎡) եբրայերենից թարգմանաբար նշանակում է «գլուխ, ճակատ»: Այն բարձր գրակալ է, որը գտնվում է ամբիոնի վրա և որի վրա դրվում են Ավետարան և խաչ: Տաճարը (𐎎𐎠𐎢) եկեղեցու այն մասն է, որտեղ գտնվում է բեմը, դասերը և ժողովրդի տեղը: Տաճարը, որպես սուրբ շինություն, առանձնանում է մնացած շենքերից ոչ միայն իր ներքին, այլև արտաքին տեսքով: Արտաքին տեսքով այն իրենից ներկայացնում է տապան կամ նավ, որի մեջ հավատացյալները փրկվում են հավերժ մահից: Տաճարի գագաթը (զանգագատունն ու խորանը) պսակվում է գմբեթով, որը խորհրդանշում է եկեղեցու անտեսանելի Գլուխը՝ Հիսուս Քրիստոսին: Գմբեթների վրա կանգնեցվում է խաչ՝ որպես հաղթանակի նշան: Տաճարը ներսից բաժանվում է 3 մասի. ա) խորան, բ) տաճար, գ) գավիթ: Նահատակների տունը ( 𐎎𐎠𐎢𐎡) գտնվում է տաճարի հյուսիսարևմտյան մասում, որի մեջ գտնվում են տվյալ եկեղեցու սուրբի կամ նահատակի անունը կրողի մասունքները:

Ամառային աղոթատունը (𐎎𐎠𐎢𐎡 𐎎𐎠𐎢 𐎎𐎠𐎢) գտնվում է եկեղեցու բակում և նախատեսված է ամռանը կատարվող ժամերգությունների համար<sup>18</sup>:

Բոլոր այս նկարագրությունները ներկայացված են սխեմատիկ պատկերով աշխատանքի վերջում՝ հավելվածում:

<sup>18</sup> Isaac J., Ibidem. p. 37

## Գլուխ II. Արևելքի Ասորական Եկեղեցու պատարագի աստվածաբանությունը

### 2.1 Երախաների պատարագ

ա. Մար Ադդայ և Մար Մարի առաքյալների պատարագի պատմությունն ու կառուցվածքը

Իր գոյության առաջին հարյուրամյակում քրիստոնեական եկեղեցին ուներ մեծ քանակությամբ պատարագամատույցներ: Այդ վկայվում է եկեղեցու վարդապետների և Սուրբ Հայրերի բազմաթիվ աշխատություններում: Հարկ է նշել, որ քրիստոնեական ծիսակարգը, որի կենտրոնական մասն էր կազմում Պատարագը, իր բուն զարգացումն ու վերելքը ապրեց հատկապես IV-V դդ., երբ Եկեղեցին ստացավ արտոնություններ, հետագայում նաև պետական կրոնի կարգավիճակ: Ծիսակարգային տեքստերը, որոնք նախանիկիական շրջանում հիմնված էին մեծ մասամբ խարիզմատիկ ստեղծագործությունների վրա, փոխարինվեցին ֆիքսված ձևերով: Սկզբում այդ փոփոխությունը կրեց *անաֆորան*, հետո նաև պատարագի մյուս տարրերը: Հետագոտողներին հաջողվեց IV-V դդ. շեմին հայտնաբերել հարյուրավոր *անաֆորաներ*, որոնք կիրառվում էին տեղական եկեղեցիներում: Ինչպես նշվեց, ամենահին *անաֆորաները* բաժանվեցին ենթախմբերի՝ երուսաղեմաանտիոքյան (բյուզանդական), ալեքսանդրյան (եգիպտական) և ասորական<sup>19</sup> (միջագետքյան)<sup>20</sup>: Վերջին ենթախմբին է պատկանում Մար Ադդայ և Մար Մարի<sup>21</sup> առաքյալների պատարագը: Այս պատարագը, որի հայրենիքը համարվում է Միջագետքը, առաջացել է արևելասասորական քրիստոնյաների միջավայրում՝ Արևելքի Եկեղեցու հետևորդների, որն ավելի հայտնի է որպես «Ասորական»: Համաձայն «Ադդայի վարդապետության»՝ նշյալ պատարագն ունի վաղնջական սկզբնավորում և կազմվել է Ադդայի և Մարիի կողմից, որոնք

<sup>19</sup> Ասորական *անաֆորաները* կոչվում էին նաև պարսկական, որովհետև Արևելքի Ասորական Եկեղեցին մեծ մասամբ տեղակայված էր պարսկական տիրապետության սահմաններում: Ավելին, այս եկեղեցին գրականության մեջ հանդիպում է նաև Պարսկական Եկեղեցի անվամբ: Տե՛ս, Рональд Робертсон, Ассирийская Церковь Востока, Москва, 2001, стр. 53

<sup>20</sup> Карабинов И.А., указ. раб., стр. 28

<sup>21</sup> Հայրեն գրականության մեջ Մար Մարի: Տե՛ս, Գաթրճեան Վ., Սրբազան պատարագամատույցը հայոց, Վիեննա, 1897թ., էջ 76

քրիստոնեական կրոնի տարածողներն էին Եդեսիայում, Մելնկիա-Կոտեսիֆոնում և դրանց շրջակայքում: Այս ձեռագրում բերվում է նաև Եդեսիայի արքա Աբգար V Ուքքամայի (Սևի) հետ կապված հայտնի պատմությունը. Քրիստոսի 72 աշակերտներից Ադոայը (Ադոայոս կամ Թադեոս) Թովմաս առաքյալի կողմից ուղարկվեց Եդեսիա, որպեսզի բուժի թագավորին: Ադոայն ու իր աշակերտ Մարին արքային բուժելուց հետո դարձի բերեցին ու մկրտեցին թագավորին, արքունիքի անդամներին և քաղաքի բնակչությանը: Այսպես, Եդեսիայի թագավորության մեջ ստեղծվեց Եկեղեցի: Բացի այդ, վերոհիշյալ ձեռագրում նշված է նաև, որ առաքյալները պատարագամատույց կազմեցին, որը հետագայում անվանվեց իրենց անվամբ: Իրավամբ, ներկայումս գոյություն չունի որևէ ավելի վաղ փաստաթուղթ, բացի «Ադոայի վարդապետություն»-ից, որը կտա մեզ այլ տվյալներ:

Բացի տեղական ավանդության տվյալներից, «Մար Ադոայ և Մար Մարի առաքյալների պատարագ»-ի վաղնջականությունը փաստվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հասկանիչներով: Առաջին հերթին այն փաստը, որ վերոնշյալ պատարագի տեքստերում չկա «նեստորականության» որևէ նշույլ, ինքնին ցույց է տալիս, որ պատարագը կազմվել է ոչ ուշ քան V դար, և այն հանգամանքը, որ այդ պատարագը հաճախ անվանվում է «առաքելական» և չի վերագրվում որևէ կոնկրետ անձի ցույց է տալիս, որ այն իսկապես ստեղծվել է առաքելական շրջանում: Պետք է նշել նաև, որ այդ պատարագի աղոթքները շատ պարզ են և չեն ընդգրկում թեկուզև առաջին երեք տիեզերաժողովների դավանաբանական նրբությունները: Այս առիթով գիտնական Ռենոդոտն ասում է. «Ասորական եկեղեցու համար առաջինը, որը մնացածի համար ծառայում է որպես օրինակ (canon), սուրբ առաքյալների պատարագն է: Այսպես են «նեստորականները» անվանում Ադոային և Մարիին (Adaeum et Marin), որոնց նրանք անվանում են նաև Արևելքի վարդապետներ և շատ մեծ տեղ են հատկացնում իրենց սրբազան ավանդության մեջ: Այսպես, Ադոայը կամ Թադեոսը Ավետարան էր քարոզում Էդեսսայի բնակիչներին Քրիստոսի Համբարձումից հետո և քրիստոնեական կրոնի դարձրեց Միջագետքի բոլոր բնակիչներին և իր աշակերտ Մարիի հետ պատարագի կարգ սահմանեց այնտեղ...»<sup>22</sup>:

<sup>22</sup> RENAUDOT E. Liturgiarum Orientalium Collectio. 2 vol. Parisii, 1715-1716. Editio Secunda Correctior. Baer, Francoufurti ad Moenum, 1847, p.546

Այս ամենին կարելի է ավելացնել, որ վերոնշյալ պատարագամատույցի բնօրինակներում չի նկատվում հունարեն լեզվից թարգմանության հետքեր:

Իսկ ինչ վերաբերում է պատարագի կառուցվածքին, ապա այն պայմանականորեն բաժանվում է երկու մասի՝ **երախայից պատարագ** և **հավատացյալների պատարագ**: Երախայից պատարագը տևում է մինչև Սուրբ Նշանների բարձրացնելը խորան և բաղկացած է փոքր փառաբանությունից, «Հայր մեր»-ից, մուտքի փոփոխվող շարականից, խորանի շարականից, «Սուրբ Աստված»-ից, խունկի աղոթքից, Սուրբ Գրքի ընթերցումներից, երախաների և ապաշխարողների համար երկու աղաչական աղոթքներից և չմկրտվածներին ու չապաշխարածներին եկեղեցուց դուրս գալու հորդորից: Իսկ հավատացյալների պատարագը, որը տևում է ընծաների՝ խորան բարձրացնելուց և տևում է մինչև արձակում և բաղկացած է շարականներից, Նիկիական հավատո հանգանակից, խնդրողական քարոզից, երեք ծածուկ աղոթքներից, Ողջույնից, երկրորդ քարոզից, ծածուկ աղոթքներից՝ ուղղված Աստծուն, Սուրբ Կույսին, խունկի աղոթքից, անաֆորայից, հատուկ քարոզից, թաքուն աղոթքից, հավատացյալների հաղորդությունից, գոհության քարոզից և աղոթքից, Տերունական աղոթքից, արձակումից, հոգևոր դասի հաղորդությունից և երեք գոհաբանական աղոթքներից:

#### **բ. Ընծաների պատրաստում և հոգևոր դասի հանդերձավորում**

Մինչ կսկսենք խոսել պատարագի արարողակարգի մասին, պետք է անդրադառնանք նշխարի պատրաստմանը Աստրական եկեղեցում և համեմատություններ անենք Հայ Առաքելական եկեղեցու ավանդության հետ: Աստրական եկեղեցում քահանան պատարագին նախորդող օրվա երեկոյան եկեղեցում հունցում է խմորը: Արարողակարգը սկսվում է Հայր մեր ( *ՔՆՁՁՁ ԶՁԸ* ) աղոթքով, որին հաջորդում է սաղմոսների ընթերցանություն (Սաղմ. Ա-Գ<sup>23</sup>): Քահանան վերցնում է այլուր, այնուհետև մեջը ջուր է խառնում, ավելացնում է թթված

<sup>23</sup> Սովորաբար ընթերցվում է երեք սաղմո, սակայն սաղմոսների թիվը կարող է ավելանալ՝ խմորի քանակից կախված: Այսպես, օրինակ, Տերունական տոների պատարագի համար հոգևորականը ավելի շատ խմոր է հունցում, քան սովորական օրերի պատարագի ժամանակ:



խմոր և ձիթապտղի ձեթ: Իսկ հայ եկեղեցում քահանան միայն ջրից ու այլուրց է պատրաստում խմորը: Ասորական եկեղեցում վերոնշյալ տարրերից նշխարի հունցումը բացատրվում է հետևյալ կերպ. այդ նյութերը բացարձակ կերպով կարևոր են մարդկանց համար, որովհետև Ադամը կազմվեց ջրից, օդից, կրակից, հողից, դրա վրա ավելացավ հոգին. ուրեմն հինգ բան: Եվ նույն սկզբունքով էլ բաղկացած պետք է լինեն նաև Հիսուսի մարմինը: Այդ պատճառով էլ հաղորդության մեջ հինգ բան պիտի լինի՝ այլուր, ջուր, թթխմոր, աղ և յուղ: Այս առիթով հարկ ենք համարում մեջ բերել Ասորի Հակոբիկյան<sup>24</sup> եկեղեցու պատրիարք Հովհաննես Ժ Բար Շուշանի նամակը՝ հղած Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոս Գեորգին<sup>25</sup>, որտեղ ասվում է. «Դուք հարցնում եք թթխմորի մասին, որ մենք և բոլոր քրիստոնյա ազգերը հաղորդության մեջ գործ ենք ածում, թե ինչ է նշանակում այն. այլ և աղն ու յուղը, որ մենք հաղորդության մեջ գործ ենք ածում:... Արդ՝ ջուր ենք վերցնում մենք իբրև նախնական ջրի նշան, այլուր՝ իբրև նշան հողի կամ փոշու, թթխմորն՝ իբրև նշան օդի և աղն՝ իբրև նշան հրոյ»<sup>26</sup>:

Հայ եկեղեցում քահանան պատարագին նախորդող օրը խմորը հունցում է և չի թողնում, որ այն թթվի ու սկսում է ապաշխարությանը վերաբերող սաղմոսներ ընթերցել: Մետաղական սաջ է դնում կրակի վրա ու չի թողնում, որ նշխարը ուռչի: Հնում պատարագի նշխարը պատրաստելու ժամանակ, սովորություն էր այն առատությամբ պատրաստել, որպեսզի դրանց միջից մի հատը սրբագործության համար ընտրելուց ու դրանով արժանավորներին հաղորդելուց հետո մնացածը, իբրև սուրբ խորհրդի բարեպաշտական մասնակցություն, բաժանվի արժանավորներին, այսինքն՝ չհաղորդվողներին: Դա կոչվում էր Մաս: Իսկ այժմ ավելի շատ նշխարներ պատրաստելուց բացի ավելի հեշտությամբ և նուրբ նշխարներ են պատրաստվում, կտոր-կտոր կամ մաս-մաս բաժանելով՝ ժողովրդին է բաշխվում և այս նուրբ նշխարները բուն նշխարներից զանազանելու համար Մաս են կոչում: Այնուհետև

<sup>24</sup> Չնայած նրան, որ Ասորի Հակոբիկյան եկեղեցին անջատվել է բուն Ասորական եկեղեցուց և առանձնանում է իր միաբնակ վարդապետությամբ, այնուամենայնիվ, վերոհիշյալ հարցի շուրջ նրանք հավատարիմ են մնացել հին ավանդությանը, և մեջբերված նամակը մի ուշագրավ վկայություն է՝ հայ և ասորի եկեղեցիների միջև եղած պաշտամունքային սովորությունների տարբերության մասին:

<sup>25</sup> Հ. Տաշյանն ու Չամչյանը գտնում են, որ խոսքը Գևորգ Բ Գառնեցու մասին է: Տե՛ս, Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորուց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 246

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 246-247

պատարագիչ քահանան պատարագին նախորդող ամբողջ գիշեր պետք է ապաշխարական սաղմոսներ ընթերցի:

Ասորական եկեղեցում պատարագի օրը՝ վաղ առավոտյան, քահանան անց է կացնում նշխարի պատրաստման արարողակարգ, որը տեղի է ունենում ավանդատանը կամ սարկավագատանը: Նախ խմորի չորացած երեսը վերցնում է, որը ծառայելու է որպես թթխմոր հաջորդ պատարագի համար, այնուհետև առանձնացնում է Մասը, հետո բաժանում է երեք կամ հինգ մասի, այնուհետև յուրաքանչյուր մասի մեջ լցնում է Սրբազան Թթխմոր<sup>27</sup>, որի կիրառումը հաստուկ է Արևելքի Ասորական Եկեղեցու սրբազան ավանդությանը: Սրբազան Թթխմորը գտնվում է խորանում, և քահանան 144-րդ սաղմոսի ընթերցանությամբ այն ավանդատուն է բերում, այնուհետև հաստուկ աղոթքի ուղեկցությամբ լցնում է այն արդեն իսկ բաժանված կենտ թվով նշխարների վրա, հետո սաղմոս 24-ի ընթերցանությամբ վերադարձնում է խորան: Ինչպես հայ եկեղեցում գոյություն ունի Մասի գաղափար, նույնպես և ասորական եկեղեցում, սակայն քանի որ Ասորական եկեղեցում օգտագործվում է Սրբազան Թթխմոր և որը դասվում է 7 խորհուրդների շարքին, Մասում դրանից չի ավելացվում և այն փաստորեն նույն ազդեցությունը չունի, ինչ սրբագործված նշխարը: Ասորական եկեղեցում Մասը կոչվում է *բուխրա* (ܒܘܚܪܐ), որը թարգմանաբար նշանակում է առաջնեկ : Ինչպես հայ եկեղեցում, նույնպես էլ ասորական եկեղեցում Մասը տալիս են այն մարդկանց, ովքեր հիվանդության պատճառով չեն կարողացել մասնակցել պատարագին: Բայց տարբերությունը կայանում է նրանում նաև, որ հայ եկեղեցում Մասով հաղորդվում են այն մարդիկ, ովքեր արժանի չեն մոտենալ սուրբ խորհրդին, իսկ ասորական եկեղեցում հաղորդություն չեն ստանում միայն չմկրտվածները, որոնք հետագայում

---

<sup>27</sup> Համաձայն Արևելքի Ասորական Եկեղեցու ավանդության՝ Վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսի բաժանած նշխարից մի փոքրիկ կտոր Աղոյ առաքյալը իր հետ բերել է Եդեսիա և ամեն անգամ այն խառնելով ավելի մեծ քանակությամբ այլուրի մեջ պահպանվում է մինչ օրս: Ի միջի այլոց թթխմորը դասվում է 7 խորհուրդների շարքին: Եվ ամեն տարի Ավագ Հինգշաբթի օրը անց է կացվում թթխմորի օրհնության արարողակարգ: Թթխմորը հոգևոր ժառանգության ամենաբնորոշ օրհնակներից մեկն է և ավանդաբար ավանդականի շարունակությունը նորի մեջ: Այս գեղեցիկ ավանդության նպատակն է մեկ անգամ ևս հաղորդակից դարձնելու այս միախառնումին, թե ինչպես առաքելական շրջանից սերնդեսերունդ մեր ժամանակներն է հասել Քրիստոսի բեկած նշխարից մի մաս: Փաստորեն թթխմորը օրհնության ամեն արարողությունից հետո թե՛ ավելի հին է դառնում, և թե՛ առավել նորոգվում ու նորանում՝ ճառագելով հոգևոր մշտափայլ լույսով: St' u, Mar Odishoo Metropolitan, Marganitha, Translated by His Holiness Mar Eshai Shimun XXIII, Chicago, 1988, p. 59



այդ Դեմքի (փարսոփա 𐭠𐭣𐭥𐭩) մեջ, Որը Մեկ Քրիստոսն է, խոստովանվում է Աստծո Որդին երկու բնություններում և այդ բնությունների անուններում՝ իրենց կնոմաների<sup>30</sup> 𐭠𐭣𐭥𐭩 առանձնահատկություններով, որոնք, լինելով զանազանվող, միասնական են առանց խառնման և, լինելով միասնական առանց խառնման՝ զանազանվող են: Իրենց հատկություններով դրանք ունիկալ միության մեջ են Քրիստոսի՝ Աստծո Որդու Դեմքի մեջ հավիտյանս...»<sup>31</sup> : Եվ Արևելքի Ասորական եկեղեցու քրիստոսաբանական բանաձևը հետևյալն է. «երկու բնություն՝ իրենց կնոմաներով մեկ դեմքի մեջ»: Ավելին, Արևելքի Ասորական եկեղեցու վարդապետները, ինչպես և ժողովները, միանգամայն հերքում են «երկու որդիների» դավանանք ունենալու անհեթեթ մեղադրանքը:

Ինչպես տեսանք, ընծաները դրվեցին խորհրդանոցներում մինչ կսկսվի պատարագը: Սակայն ի տարբերություն ասորի եկեղեցու՝ հայ եկեղեցում, երբ քահանան արդեն խոստովանությունից հետո բեմ է բարձրանում ու վարագույրը փակվում է, և վերջինս Ս. Գրիգոր Նարեկացու աղոթքները կարդալուց հետո է դնում սպասը: Սարկավագը երեք նշխար է բերում՝ ի նշան Սուրբ Երրորդության, իսկ պատարագիչը, նիանցից մեկը վերցնելով և աղոթելով, դնում է մաղզմայի վրա, այնուհետև գինին խաչանիշ լցնում է սկիհի մեջ և աղոթում: Ապա մաղզման դնում է սկիհի վրա և այն սքողում զարդանախշ ծածկոցով: Երեք անգամ խաչակնքում է սկիհը՝ ասելով. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զորություն բարձրելոյն հովանի լիցի ի վերա Քո»: Ինչպես գիտենք, այս խոսքն ասել էր Գաբրիել հրեշտակապետը՝ Սուրբ Կույս Մարիամին ավետելիս: Սրանով փաստվում է, որ հացն ու գինին իսկապես Տիրոջ Մարմինն ու Արյունն են դառնալու, որովհետև Աստծո համար ոչինչ անկարելի չկա<sup>32</sup>: Սակայն ինչպես նկատեցինք ասորական եկեղեցում քահանան գինին, որը լցնում է սկիհի մեջ, անվանում է Տիրոջ Արյուն: Փաստորեն այդ պահից սկսած գինին

<sup>30</sup> Կնոմա եզրը հատուկ է միայն սեմական լեզվամտածողությանը, և հունարեն *σπόστας* եզրը որոշ չափով մոտ է դրան: Բայց ի տարբերություն *σπόστας* – ի, որը հունարենում նշանակում է անձ՝ ասորերենում այն նշանակում է կոնկրետ բնության դրսևորման ձև, և քանի որ Ասորական եկեղեցին ընդունում է երկու բնություն, ապա պարզ է դառնում, թե ինչու է երկու կնոմա ընդունվում: Այդ տերմինը չհասկանալու պատճառով էլ Արևելքի Ասորական եկեղեցուն մեղադրել են հերետիկոսության մեջ:

<sup>31</sup> Տե՛ս Н.Н.Селезнев, Христология Ассирийской Церкви Востока, Москва, 2002, стр.80

<sup>32</sup> Վազգեն վարդապետ, Պատարագամատոյց, Բուխարեստ 1945 թ., էջ 50

դառնում է Տիրոջ Արյունը, իսկ նշխարը դառնում է Տիրոջ Մարմինը, ավելին, համաձայն Արևելքի Ասորական եկեղեցու պատարագի աստվածաբանության՝ հացը Մարմին է դառնում հենց խմորը հունցելու ժամանակ, իսկ գինին արյուն՝ այն սկիհի մեջ լցնելիս: Եվ պատարագի ընթացքում ոչ մի անգամ չեն գործածվում հաց և գինի բառերը, այլ միայն Մարմին և Արյուն: Հացի և Գինու մեջ Քրիստոսի ներկայության մասին Մար Նարսայը պնդում է, որ հացը դարձնում է «թանկարժեք Մարմին» և գինին դառնում է «ճշմարիտ Արյուն»՝ չնայած նրան, որ դրանց բնությունները իրարից հեռու են, բայց դրանք դառնում են Մարմին և Արյուն, որովհետև Քրիստոս ներկա է դրանց մեջ գործությամբ և միությամբ<sup>33</sup>: Փաստորեն հացն ու գինին իրենց բնական համը և նյութը (materia) չեն փոխում: Հայ եկեղեցուց, և առհասարակ, մնացած բոլոր եկեղեցիներից Արևելքի Ասորական եկեղեցին տարբերվում է նրանով, որ այդ եկեղեցիներում գինին և նշխարը կոչվում են հաց և գինի և հետո են դառնալու Տիրոջ Մարմինն ու Արյունը:

Երկու եկեղեցիներում էլ սպասքի նախապատրաստումը տեղի է ունենում վարագույրը փակ եղած ժամանակ: Ասորական Եկեղեցում գինու մեջ ջուր խառնելը, որը անընդունելի երևույթ է Հայ Եկեղեցու համար, համաձայնեցված է ավետարական այն դրվագի հետ, երբ Քրիստոսի կողքը գեղարդով ծակում են, ապա դուրս է գալիս արյուն և ջուր<sup>34</sup>: Բայց նաև Հայ Եկեղեցում աղոթքի մեջ, որը քահանան ասում է գինին սկիհի մեջ լցնելու ժամանակ, այն նշվում է որպես կողահոս արյուն<sup>35</sup> և չի հիշվում ջուր. «Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ Փրկիչ մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ ի կողահոս արեան աղբերեն նորոգեցան արարածք եւ անմահացան. Օրհնեցէք, գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան»: Այս ավանդության հիմքում ընկած են երկու եկեղեցիների քրիստոսաբանական հայացքները:

<sup>33</sup> NARSAI Doctoris Syri HOMILIAE et CARMINA Primo Edita Cura et Studio D.ALPHONSI MINGANA Professoris Linguae Syriace in Seminario Fratrum Praedicatorum Mausiliensi cum Praefatione Editoris, vol. I, Mausilii 1905, p282

<sup>34</sup> «Բայց երբ եկան Յիսուսի մօտ եւ տեսան, որ նա արդէն մեռած էր, նրա սրունքները չկտորեցին, այլ զինուորներից մեկը տեղով խոցեց նրա կողը, եւ իսկոյն արիւն եւ ջուր ելաւ» (Յովհ. ԺԹ:ԼԳ-ԼԵ)

<sup>35</sup> Տե՛ս, Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցիոյ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1880թ., էջ 6



#### գ. Պաշտամունքի սկիզբ

Պատարագի առաջին մասը, որն անց է կացվում բեմի վրա, Արևելքի Ասորական Եկեղեցու ավանդության մեջ կոչվում է Աստծո խոսք: Ինչպես տրված է հավելվածում՝ բեմը գտնվում է տաճարի կենտրոնում և խորհրդանշում է Երուսաղեմը: Բեմի վրա պատարագի սկսելը ցույց է տալիս Քրիստոսի երկինք գալը, քարոզը, հրաշագործությունները և այլն: <sup>41</sup>: Հայ Եկեղեցում գոյություն ունի «Աշխարհ Գալոց»-ի գաղափարը, որը, ինչպես գիտենք, այն պահին է, երբ քահանան իջնում է բեմից, խնկարկում է ժողովրդին, և նորից բարձրանում է բեմ: Դա խորհրդանշում է Քրիստոսի երկինք գալը, քարոզելը և համբարձվելը: Սակայն ի տարբերություն Հայ Եկեղեցու՝ Ասորական Եկեղեցում դա հենց պատարագի սկզբում է տեղի ունենում:

Արևելքի Ասորական Եկեղեցու պատարագի ժամանակ յուրաքանչյուր քրիստոնյա կարծես ականատես է լինում Քրիստոսի ողջ երկրային կյանքին՝ Ծնունդից մինչև Հարություն և վերջում հաղորդակից է դառնում Քրիստոսի արքայությանը՝ ճաշակելով Տիրոջ Մարմինն ու Արյունը: Եվ առհասարակ, բոլոր քրիստոնեական եկեղեցիներում էլ նույն նշանակությունն ունի պատարագը:

Բեմի վրա նստած եպիսկոպոսը հրաման է տալիս *արքառայակոնին*<sup>42</sup> սկսել պատարագը: Արքառայակոնն իր հերթին նշում է այն քահանային և երկու սարկավազներին, որոնք պետք է մատուցեն պատարագը: Երկու սարկավազների առկայությունը խորհրդանշում է Գաբրիել և Միքայել հրեշտակապետերին: Իսկ բեմում կանգնած հոգևորականները պետք է կանգնած լինեն երկու դասերով (և ոչ միայն նրանք, այլ առհասարակ բոլորը): Այդ սովորույթը շատ հին է, և դրա մասին է վկայում սրբազան ավանդությունը. Անտիոքի եպիսկոպոս Մար Իգնատիոսը (†117) (Իգնատիոս Անտիոքացի) մի տեսիլք տեսավ, որտեղ հրեշտակները երկու դասով փառաբանում էին Աստծուն: Այնուհետև նա պատգամեց եկեղեցում էլ այդպես երկրպագել Աստծուն: Ինչպես նաև եկեղեցական պատմիչ Բար Էբրայան է վկայում,

<sup>41</sup> St' u Corpus Scriptorum Christianorum Orientalium, Curantibus. Chabot I. B, Guidi I., Hyvernat H., SCRIPTORES SYRI, Textus Series Tertia – Tomus XCI, Anonymi Auctoris, Edidit Connolly R. H., O.S.B, Parisiis, MDCCCXI, p.95

<sup>42</sup> Արևելքի Ասորական եկեղեցում *արքառայակոնը* ավագ քահանայի պատվավոր տիտղոսն է, որը նաև եպիսկոպոսի անմիջական օգնականն է:

որ Արևելքում այդ կարգը սահմանվեց Մար Շիմունն Բար Սաբբաէ կաթողիկոսի օրոք:<sup>43</sup>

Պատարագը սկսվում է բեմի վրա քահանայի խոսքերով.

Քահանա. «Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու. Ամեն

Փափք Աստծուն՝ բարձունքներում (3 անգամ), և երկրի վրա խաղաղությունն և հաճությունն մարդկանց մեջ»: Այս փառաբանությունը երկիմաստ է. նախ «Փափք Աստծուն՝ բարձունքներում»-ը երեք անգամ կատարելը ցույց է տալի, որ հենց ծեսի սկզբում փառաբանվում է Սուրբ Երրորդությունը: Դրա հաջորդ բացատրությունն այն է, որ պատարագը սկսվում է Քրիստոսի ծնունդով, քանզի երբ Տերը ծնվեց, հրեշտակները եկան հովիվների մոտ ու երգեցին վերոնշյալ փառաբանությունը (տե՛ս Ղկ. Բ:ԺԴ): Փաստորեն, պատարագը սկսվում է Քրիստոսի ծնունդով: Այնուհետև Երկնքի և երկրի երկրպագությունը միաձուլվում է, քանզի տաճարում եղած բոլորը արձագանքում են երկնային հայտարարությանը և միանում են սրբաբանում գտնվողներին, երբ նրանք սկսում են տերունական աղոթքը, և բոլորը միասին (հոգևոր դասն ու ժողովուրդը) երգում են «Հայր մեր...» (ܐܘܘܘܬܐ ܐܒܝܢܐ) : Նկատենք, որ ի տարբերություն Հայ Եկեղեցու՝ Ասորական Եկեղեցում քահանան չի խոստովանում ժողովրդի առջև պատարագի սկզբում և լվանում ձեռքերը:

Ասորական Եկեղեցում քահանայի յուրաքանչյուր աղոթքից առաջ սարկավագը երգում է. «Աղոթենք՝ խաղաղություն մեզ հետ» (ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ): Ասորական Եկեղեցում քահանայի աղոթքների մեծամասնությունը ենթարկվում է փոփոխության՝ կախված այն բանից, թե ինչ օր է տվյալ օրը. Տերունական տոներ, սրբերի հիշատակի օրեր, կիրակի, սովորական օրեր: Այսպես քահանայի աղոթքից հետո քահանան ու սարկավագը յուրաքանչյուրը մեկական տող երգում են տվյալ օրվա *մարմիթան*<sup>44</sup>, որից հետո սարկավագը երգում է «Խաղաղություն մեզ հետ»: Մեկ այլ աղոթքից հետո երգում են խորանի շարականը<sup>45</sup>, որը կատարվում է հերթականությամբ սկզբից քահանայի, այնուհետև՝ սարկավագների կողմից: Դրանից հետո երկրորդ դասի<sup>46</sup>

<sup>43</sup> Թ. 6.Ձ. 1996, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ

<sup>44</sup> Մարմիթան երկու կամ ավելի սաղմոսներից բաղկացած շարական է, որը նույնպես փոփոխական բնույթ է կրում՝ կախված նրանից, թե ինչ օր է կատարվում պատարագը:

<sup>45</sup> Ամեն օրն ունի իրեն հատուկ շարական, որոնք գետեղված են *Խուղղա* գրքում:

<sup>46</sup> Տե՛ս, 7.Ձ. 1996, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ, ܐܘܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ ܠܗܘܘܬܐ



սարկավագը՝ բուրվառը ձեռքին, մոտենում է եպիսկոպոսին և վերջինս լցնում է խունկ բուրվառի մեջ ու պատարագիչ քահանան աղոթում է. «Փառաբանված Երրորդությանդ անունով թող օրհնյալ լինի այս խունկը, որը ծխում ենք Քո պատվին և թող լինի այն մեր քավության համար...» Այնուհետև քահանան աղոթում է, և այդ ընթացքում սարկավագը խնկարկում է բեմի բոլոր կողմերը և ժողովրդին:

Քահանայի աղոթքից հետո բոլորը միասին 3 անգամ երգում են այս երգը. «Քեզ, Տեր մեր, բոլորս դավանում ենք, և Քեզ՝ Հիսուս Քրիստոս, փառաբանում ենք, որովհետև Դու ես մեր մարմիններին հարություն տվողը և Դու ես մեր հոգիներին հանգստություն տվողը»: Այս երգն անվանվում է նաև «Ադամի երգ», որովհետև համաձայն ավանդության՝ երբ Քրիստոս խաչի վրա իր հոգին փչեց, այդ ժամանակ Ադամը և հին ուխտի արդարները հարություն առան և երգեցին այս երգը:<sup>47</sup> Այնուհետև քահանան մեկ այլ աղոթք է ասում, որից հետո սարկավագը երգում է. «Բարձրացրեք ձայները ձեր և օրհնեցեք բոլորդ հավերժ Աստծուն»: Եվ երեք անգամ երգում են «Սուրբ Աստված»-ը: Առաջին անգամ կատարում է ժողովուրդը. «Սուրբ Աստված, Սուրբ Հզոր, Սուրբ Անմահ, ողորմի՛ր մեզ», որից հետո հոգևոր դասը, հետո նորից ժողովուրդը: Հայ Եկեղեցում Սուրբ Աստված երգը կոչվում է նաև «Երեքսրբյան» և տեքստը հետևյալն է. «Սուրբ Աստված, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, որ յարեառ ի մեռելոց ( կամ որ խաչեցար վասն մեր), ողորմեա մեզ»: Սակայն «որ խաչեցար»-ը ավելացվում է տարին մեկ անգամ՝ Ավագ Հինգշաբթի օրը: Հայ Եկեղեցում վերոնշյալ հավելումը ուղված է Ռոդի Աստծուն, որն ուզում է ասել՝ Սուրբ, Հզոր և Անմահ Աստված ես Դու և մարդկության Փրկիչը և այդ իսկ պատճառով մարդացել ես ու ինքդ Քեզ խոնարհեցրել, այն էլ՝ մինչև Խաչի մահ և այլն, միշտ մեզ փրկելու համար, այսքան սիրույդ համարր ողորմիր մեզ<sup>48</sup>: Սակայն Ասորական Եկեղեցում այս երգը ուղղված է մի միայն Սուրբ Երրորդությանը, որով և անընդունելի է դառնում «որ խաչեցար» հատվածը: Հայ Եկեղեցում օգտագործվող այդ արտահայտությունը շատ տարածայնությունների առիթ է հանդիսացել դարեր շարունակ: Եվ ավելին, հունադավան եկեղեցիները Հայ Եկեղեցուն դատապարտում է հերետիկոսության մեջ

<sup>47</sup> St 'u, Chorbishop Birnie M. J., The Eucharist in the Church of the East, Sixth non-official consultation on dialogue within the Syriac Tradition, PRO ORIENTE, Vienna, vol. 6, p.33

<sup>48</sup> Իգնատոսյան Վ. ծ. վրդ., Մեր Ս. Պատարագը, , Անթիլիաս-Լիբանան, 1977թ., էջ 65

նան այդ հավելվածի համար: Ավելացնենք, որ այդ հատվածի առկայությանը անդրադարձել է նաև Արևելքի Ասորական եկեղեցին՝ ի դեմս 14-րդ դարի հայտնի աստվածաբան Մար Ավդիշո Բար Բրիխայի: Նա իր «Մարգյանիթա» (նշ. է մարգարիտ կամ գոհար, ասոր.՝ ܡܪܓܝܢܝܬܐ) կոչվող կատեխեզիսում նշում է, որ հայերն ու հակոբիկյանները ավելացրել են «որ խաչեցար»-ը, սակայն նա չի որակում դա որպես հերետիկոսություն, այլ ուղղակի թվում է քրիստոնեական եկեղեցիների դավանաբանական տարբերությունների շարքում: Կա գիտնականների մի խումբ, որոնք գտնում են, որ Արևելքի Ասորական Եկեղեցում ևս այս երգը սկզբնական շրջանում նվիրված է եղել Քրիստոսին<sup>49</sup>:

#### դ. Սուրբ Գրքի ընթերցումներ

Ասորական Եկեղեցում պատարագի այն մասը, որը անց է կացվում բեմի վրա կոչվում է «Աստծո խոսք», որովհետև Աստված Սուրբ Գրքի միջոցով մարդկանց հայտնում է Իր պատգամներն ու խրատները: Այսպես, Ասորական Եկեղեցում Սուրբ Գրքի ընթերցումները զետեղված են ծիսական երեք գրքերում: Այդ գրքերից առաջինը կոչվում է *Կոյանա* (ܟܘܝܢܐ), որը թարգմանաբար նշանակում է ընթերցվածներ: «Սուրբ Աստված» (ܐܘܠܐ ܟܘܝܢܐ) երգին հաջորդող աղոթքից հետո դպիրը կանգնում է բեմի ձախ մասում, դառնում է ժողովրդին ու երգում. «Նստեցե՛ք<sup>50</sup> և լսե՛ք Եսայու (կամ այլ մարգարե) մարգարեությունը. Օրհնի՛ր Տեր»: Դպիրը ծնկի է գալիս եպիսկոպոսի մոտ, վերջինս էլ աղոթք է կարդում և խաչակնքում դպիրին: Այնուհետև դպիրը ոտքի է կանգնում և սկսում *Կոյանա* գրքից կարդալ տվյալ օրվա ընթերցվածը: Այդ ժամանակ բոլորը նստում են կամ ծնկում, որովհետև վաղ ժամանակներում եկեղեցիներում աթոռներ չեն եղել հավատացյալների համար: Միայն եպիսկոպոսն է նստել իր

<sup>49</sup> Տե՛ս, Chorbishop Birnie M. J., նշվ. աշխ., էջ 34

<sup>50</sup> Այս գիրքը կարդալու ժամանակ բոլորը՝ քահանայից (Արևելքի Ասորական Եկեղեցու ավանդության մեջ սարկավագը նույնացվում է հրեշտակի հետ, և քահանայի որ հրեշտակը սպասավորի դերում է Հիսուսի համար, ապա նա պատարագի ողջ ընթացքում իրավունք չունի նստելու) նստում են՝ համաձայն Ավետարանի այն դրվագի, երբ Հիսուս տաճարում ընթերցում էր Եսայի մարգարեի գրքից մի հատված, իսկ տաճարում հավաքված մարդիկ նստել և Տիրոջն էին ունկնդրում: Տե՛ս, ܠܘܩܐ ܕܡܪܩܘܠܐ 41. ܘ1830, ܕܘܠܐ ܕܡܪܩܘܠܐ ܕܡܪܩܘܠܐ ܕܡܪܩܘܠܐ



Եկեղեցին *օրթոի* փոխարեն նույն իմաստով գործածում է ասորերեն *նկում* (ܢܘܡ) բառը, որը նշանակում է «կանգնենք»:

Բացի *Կոչանա* գրքից Ասորական Եկեղեցում գոյություն ունի *Շլիխա* (ܫܠܝܚܐ, ասոր. թարգմանաբար նշանակում է առաքյալ) գիրքը: Հայ Եկեղեցու «Ճաշոց» գրքում, ինչպես տեսանք, ընդգրկված էին Պողոս առաքյալի որոշ թղթեր: Ասորական Եկեղեցում *Շլիխա* գիրքը պարունակում է միայն Պողոս առաքյալի որոշ թղթերը, որոնք նախատեսված են յուրաքանչյուր պատարագի համար: Այսպես, *շուրայայից* հետո քահանան մեկ այլ աղոթք է ասում, որից հետո կիսասարկավազը գալիս կանգնում է բեմի աջ կողմում, դառնում ժողովրդին ու ասում. «Հիսուս Քրիստոսի առաքյալ Պողոսի՝ կորնթացիներին ուղղված նամակից: Օրհնի՛ր Տեր», որից հետո կիսասարկավազը մոտենում և ծնկի է գալիս եպիսկոպոսի մոտ, վերջինս աղոթք է կարդում և խաչակնքում նրան: Հետո կիսասարկավազը կանգնում է բեմի աջ կողմում և *Շլիխա* գրքից կարդում տվյալ օրվա համար նախատեսված ընթերցվածը: Այս գիրքը կարդալու ընթացքում բոլորը պետք է ոտքի կանգնեն: Կարդալուց հետո կիսասարկավազն ասում է. «Փա՛ռք Պողոսի Տիրոջը. Աղոթենք՝ խաղաղություն մեզ հետ»: Այնուհետև պատարագիչ քահանան, ծածուկ աղոթք ասելով, գնում է ավանդատուն: Այդ պահին եպիսկոպոսը երեք անգամ «Ալելուիա» (ܐܠܠܘܝܐ) է երգում, այդ ժամանակ սարկավազը մոտենում է եպիսկոպոսին, և վերջինս խունկ է լցնում բուրվառի մեջ, հետո ժողովուրդը երգում է «Ալելուիա» (Յանգամ), որից հետո սարկավազը *զումարա*<sup>52</sup> (ܩܘܡܪܐ) է երգում, ու բոլորը միասին երգում են «Ալելուիա» (Յանգամ), սարկավազը նորից զումարա է երգում ու բոլորը միասին երգում են «Ալելուիա» (Յանգամ): Երբ սկսում է ալելուաների շարքը, պատարագիչ քահանան գնում է ավանդատուն ու այնտեղից հանդիսավոր կերպով ալելուաների ուղեկցությամբ բեմ է բերում Ավետարանը: Երբ արդեն քահանան հասնում է բեմ, բոլորը երգում են «Հավատացյալ ենք հիմներ» (ܚܘܒܘܬܐ ܗܝܠܐܢ), որից հետո սարկավազներից մեկը կանգնում է նրա դիմաց և բուրվառը ձեռքին՝ խնկարկում է ու ասում. «Կանգնենք ուշադրությամբ, որպեսզի լսենք Մեր Տիրոջ Սուրբ Ավետարանը»:

<sup>52</sup> *Չումարան* (ասոր. նշանակում է երգ) Դավթի սաղմոսներից երկու նախադասություն է, որից ամեն մեկը երգվում է առանձին:

Քահանան կանգնում է բեմի մեջտեղում և ասում. «Խաղաղությունն ձեզ հետ» ու խաչակնքում ժողովրդին, որը պատասխանում է. «Քեզ հետ և քո հոգու հետ»: Քահանան երգում է. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարան ըստ Մատթեոսի (Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի)»: Քահանան կարդում<sup>53</sup> է Ավետարանից տվյալ օրվա համար նախատեսված հատվածը<sup>54</sup>: Քահանայի կարդալու ժամանակ երկու դպիր մոմեր բռնած՝ կանգնում են քահանայի աջ և ձախ կողմերում: Երբ քահանան ավարտում է, բոլորը միասին՝ որպես գոհունակության արտահայտություն. «Փառք մեր Տեր Քրիստոսին»: Հայ Եկեղեցում Ավետարանի ընթերցումը վերապահված է սարկավագին: Ինչպես Ասորական Եկեղեցում, այնպես էլ Հայ Եկեղեցում, Ավետարանի ընթերցումից առաջ քահանան խաղաղություն է մաղթում բոլորին: Սարկավագը Ավետարանը ընթերցում է, որից հետո ժողովուրդը ասում է. «Փառք Քեզ, Տեր Աստված մեր», որի մեջ ժողովուրդը արտահայտում է իր երախտագիտությունն ու գոհունակությունը Աստծո հանդեպ, քանի որ արժանի եղավ Հիսուս Քրիստոսի հավիտենական կյանքի խոսքերը լսելու:

Ասորական Եկեղեցում պատարագը դեռ ընթանում է բեմի վրա: Երբ գալիս է Ավետարանը կարդալու ժամանակը, քահանան գնում է *բեթ գյազա* (ܒܝܬ ܓܝܙܐ) և այնտեղից բերում է այն: Սա խորհրդանշում է, որ Քրիստոս Իր կամքով գալիս է երկրային Երուսաղեմ և Մկրտությունից հետո սկսում Իր քարոզչական գործունեությունը ամբոխների մեջ: Այնուհետև քահանան մոտեցնում է եպիսկոպոսին Ավետարանը, և վերջինս համբուրում է այն<sup>55</sup>: Քանի որ պատարագի ընթացքում եպիսկոպոսը մարմնավորում է Քրիստոսին, ապա նրա համբույրը նախախնամական նշանակություն ունի. այսպես, առաջին համբույրը ցույց է տալիս Քրիստոսի մարդեղացումը, իսկ երկրորդը նշանակում է, որ ճշմարիտ հավատացյալների համար գոյություն ունի փրկություն: Երբ քահանան ավարտում

<sup>53</sup> Ի տարբերություն Հայ Եկեղեցու, որտեղ սարկավագը ձայնիվ է կարդում Ավետարանը, Ասորական Եկեղեցում քահանան սովորական ձևով է կարդում:

<sup>54</sup> Մինչ այդ կատարած *մարմիթան*, խորանի շարականը, *Կոյանա* գրքից ընթերցված հատվածը, *շուրայան*, *Շլիխա* գրքից ընթերցված հատվածը, *գումարան*, Ավետարանի հատվածը և քիչ հետո նաև Պատարագի շարականը իմաստով համապատասխանում են իրար և ցույց են տալիս տվյալ օրվա խորհուրդը:

<sup>55</sup> Ի տարբերություն Հայ Եկեղեցու՝ Ասորական Եկեղեցում միայն եպիսկոպոսն է համբուրում Ավետարանը կարդալուց աջտա և հետո, և մի միայն քահանան է լիագործված կարդալու այն: Իսկ Հայ Եկեղեցում սարկավագն է կարդում Ավետարանը, իսկ քահանան համբուրում է այն:

Ավետարանի ընթերցումը, *արքայականը* վերցնում է այն ու տանում դնում է Սուրբ Մեղանի վրա եղած խաչի տակ: Այն, որ արքայականն է տանում Ավետարանը, այլ ոչ թե պատարագիչ քահանան կամ եպիսկոպոսը, ունի հետևյալ բացատրությունը. Քրիստոս Ինքը եկավ և քարոզեց, բայց ուրիշները նրան տարան և խաչի վրա գամեցին: *Արքայականի* կողմից Ավետարանը տանելն ու խաչի տակ դնելը ունի նույն խորհուրդը, բայց ի տարբերություն հրեաների՝ արքայականը նրան պատվով ու ակնածանքով է կարծես տանում և խաչի վրա դնում:

## **ե. Սարկավագի քարոզն ու ընծաների դնելը Սուրբ Մեղանի վրա**

Ավետարանի ընթերցումից հետո սարկավագը մի քարոզ է ասում, որը կոչվում է « *նկում շափիր* » (**ܢܟܘܡ ܫܘܦܝܪ**): Այստեղ սարկավագը հորդորում է ժողովրդին վայել կերպով և զգոնությամբ կանգնել: Եվ ի դեմս բոլորի՝ Աստծուց խնդրում է, որպեսզի իր ողորմությունը ցուցաբերի մարդկանց հանդեպ, և սարկավագի յուրաքանչյուր խնդրանքից հետո ժողովուրդը երգում է. «Տեր մեր, ողորմիր մեզ»: Քարոզում ժողովուրդը խնդրում է նաև բարին նվիրապետներին՝ կաթողիկոս-պատրիարքին, թեմի միտրոպոլիտին և եպիսկոպոսին: Ողորմություն է խնդրվում նաև այն երկրի և երկրի բնակիչների համար, որտեղ որ բնակվում են: Այս քարոզը պետք է երգի սարկավագներից ավագը, որը և հետագայում պետք է Տիրոջ Արյունը մատուցի հավատացյալներին: Այս քարոզի բովանդակությունը շատ նման է Հայ Եկեղեցում սարկավագի կողմից կատարվող «Խաղաղականք» քարոզին, որտեղ սարկավագի «Եւ ևս խաղաղութեան զՏեր աղաչեսցուք... » խոսքերին դպիրները պատասխանում են «Տեր, ողորմեա՛», իսկ քարոզի ավարտից հետո ժողովուրդը պատասխանում է «Կեցո՛ Տեր»: Երկու եկեղեցիների պարագայում էլ քահանան այդ քարոզի ժամանակ ծածուկ աղոթում է: Դրանից հետո մեկ այլ ծածուկ աղոթք է ասում քահանան, հետո բարձրաձայն աղոթում է, ինչից հետո սարկավագները փոխն ի փոխ երգում են «Ով չմկրտվեց, թող դուրս գա: Ով չստացավ կյանքի դրոշմը, թող դուրս գա: Ով չի հաղորդվի, թող դուրս գա»: Այդ պահին կիսասարկավագը բեմից իջնում է տաճար և չմկրտվածներին ու ապաշխարողներին դուրս հանում եկեղեցուց ու փակում է

Եկեղեցու դռները: Հայ Եկեղեցում նույնպես գոյություն ունի վերոնշյալ երգին իմաստով մոտ երգ. «Մի՛ նք յերախայից, մի՛ նք ի թերահաւատից եւ մի՛ նք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեցի յաստուածային խորհուրդս»: Ասորական Եկեղեցում այնուհետև հաջորդում է «Խորհուրդների երգը» (ܐܝܢ ܐܕܘܘܠ) : Այս երգը նույնպես փոփոխական բնույթ ունի և *Խուղղա* (ܐܝܘܘܐ) գրքում յուրաքանչյուր օրվան համապատասխան ամփոփված է: Այս երգը երգվում է երեք անգամ: Առաջին անգամ *գիյորան* (նախերգանք ܐܝܘܘܐ), երգում է քահանան, իսկ ժողովուրդը պատասխանում է նրան երգով, այնուհետև սարկավագներից երեցը կատարում է նախերգանք, և բոլոր սարկավագները կատարում են, իսկ երրորդ անգամ նախերգանք, որից հետո երրորդ անգամ քահանան է երգում այս երգը: Քահանայի խորհրդատետրում տրված է այս երգի ամենահարիիր օրինակը, որը հետևյալն է. «Քրիստոսի Մարմինն ու թանկագին Արյունը Քո սուրբ սեղանին է, երկյուղով և սիրով բոլորս մոտենում ենք Դրան և հրեշտակների հետ փառաբանում ենք. սուրբ, սուրբ, սուրբ է տեր Աստվածը»:

Հենց այս երգը երգելու ժամանակ քահանան և սարկավագները բարձրանում են խորան ու քահանան խորհրդանոցից վերցնում է մաղզման, իսկ սարկավագը սկիհը: Եկեղեցում կանգնած հավատացյալներին անհասկանալի է, թե որտեղից միանգամից բերեցին Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Բացատրությունը հետևյալն է. սովորական մարդկանցից և ոչ ոք չիմացավ, թե ինչպես Տերը աշխարհ եկավ և մարմնացավ: Այնուհետև քահանան ու սարկավագը խորին ակնածանքով բերում են թանկագին ընծաները ու դնում դրանք սուրբ սեղանին: Քահանայի և սարկավագի կողմից ընծաների բերելը նույնացվում է այն դրվագի հետ, երբ հռոմեական զինվորները Քրիստոսին բռնեցին: Մակայն այս ձերբակալումը ավելի պատվավոր է, քան այն, որ Գեթսեմանի պարտեզում էր: Քահանան կանգնում է խորանի մեջտեղում՝ մաղզման բարձր պահած, իսկ սարկավագը մոտենում է նրան ու կպցնում սկիհը մաղզմայի վրա երեք անգամ: Այնուհետև, քահանան դառնում է դեպի խորան, իսկ սարկավագը գալիս է կանգնում քահանայի ձախ կողմում: Քահանան աջ ձեռքով վերցնում է սկիհը ու մաղզման պահելով ձախ ձեռքում, ձեռքերը խաչաձև պահած՝ արտասանում է աղոթք. «Օրհնություն և փառք ենք երգում Քեզ... » Հետո մաղզման ու սկիհը դնում է

իրար կողքի և ասում. «Սույն Սեղանի վրա թող լինի Քրիստոսի մայր Կույս Մարիամի հիշատակը»<sup>56</sup>, այնուհետև ծածկում շուշփայով, որը ունի այն պատանի խորհուրդը, որով պատեցին Քրիստոսին ու դրեցին գերեզմանի մեջ: Հետո քահանան երգում է. «Քանզի մաքրեցինք մեր սրտերը չարիքից...»<sup>57</sup>: Հոգևորականի՝ սրբություն սրբոց մտնելու առթիվ Մար Նարսայը իր *մեմորաներից* մեկում ասում է.

Այդուհետ քահանաները հանդիսավոր կերպով մտնում են սրբարան  
Եվ կանգնում են այնտեղ մեծ պատվով:  
Քահանան, որ ընտրվել է անարյուն գոհը մատուցելու,  
Պատարագի ժամանակ կրում է Քրիստոսի պատկերը:  
Տերը Աստծո և մեր միջև միջնորդի դերում եղավ,  
Եվ քահանան էլ նույն կերպով է միջնորդ հանդիսանում:  
Լսի՛ր, ո՞վ քահանա, թե որտեղ հասար քո աստիճանի շնորհիվ,  
Եվ դողա՛ քո Տիրոջ առջև և պատվի՛ր քո աստիճանը ինչպես հարկ է:  
Տե՛ս, թե ինչպես բարձրացվեցիր քերովբեներից վերև, սերովբեներից վերև,  
Բնությունից վե՛ր եղիր քո մտքերով ինչպես հարկ է:  
Տե՛ս, թե ինչպես վստահվեց քեզ ղեկավարել քո Տիրոջ գանձերը,  
Դրա համար եղի՛ր անարատ՝ ինչպես պատգամվել է քեզ:  
Այսկերպ քահանան պետք է կանգի պատարագի ժամանակ,  
Քանզի այդ գորությունը, որին նա մոտենում է, չունի նմանություն:  
Եվ սրբարանի բոլոր քահանաները այն առաքյալների պատկերն են ստանձնել,  
Որոնք գնացին Տիրոջ գերեզման:<sup>58</sup>

Մար Նարսայը գեղեցիկ մեկնություն է տալիս Տիրոջ Մարմինն ու Արյունը սուրբ սեղանի վրա դնելու համար.

Սուրբ սեղանը Տիրոջ գերեզմանի օրինակն է անկասկած,  
Հացն ու գինին Տիրոջ մարմինն է , որ օծված էր ու թաղված:  
Եվ թաշկինակը, որ ընծաների վրա է քարի օրինակն է,  
Որ կնքվել էր քահանաների և պահակների մատանիով:  
Եվ սարկավագները, որ այս ու այն կողմից քամի են անում,  
Հրեշտակներին են նմանակում, որ Նրա ոտքերի և գլխի մոտ էին:  
Եվ բոլոր սարկավագները, որ սուրբ սեղանի առջև ման են գալիս ու կանգնում,  
Հրեշտակներին են նմանակում, որ գրկել էին Տիրոջ գերեզմանը:  
Եվ խորանը Հովսեփի պարտեզի օրինակն է,  
Որից կյանք հոսեց մարդկանց և հրեշտակների համար:  
Մեկ այլ պատկերացմամբ՝ դա արքայության օրինակ է,  
Որ մտավ Քրիստոս և տարավ բոլոր նրանց, որոնք սիրում են Իրեն:

<sup>56</sup> Շատ եկեղեցիների խորանի առաստաղի վրա գրված է հենց այս նախադասությունը:

<sup>57</sup> 49. ܘܢܘܨܘܢܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ ܕܥܘܠܘܬܐ

<sup>58</sup> NARSAI Doctoris Syri HOMILIAE et CARMINA, Ibid. p. 91



Իր երկրպագելի խորանը պատվավոր գահի նմանությունն է,  
Որի վրա կտեսնվի մարդկանց կողմից Իր գալստյան օրը:<sup>59</sup>

Իսկ Հայ Եկեղեցում Ընծաները Սուրբ Սեղանի վրա են դրվում այլ ճանապարհով. սարկավազը ուղղվում է դեպի խորհրդանոց, որպեսզի հանի պատարագչի կողմից նախապես ծածկաբար պատրաստված Սուրբ Սկիհր: Սարկավազը, բուրվառը ձեռքին, առատորեն խնկարկում է Ս. Սեղանին, սրբատանը և ապա դանդաղ ու հանդիսավոր շարժումով մոտենում է սկիհին, վերցնում է այն, ամենայն զգուշությամբ ու երկյուղածությամբ և բերում քահանայի մոտ: Քահանան այդ պահին բազկատարած ծածուկ աղոթում է: Այդ աղոթքից հետո քահանան դառնում է սարկավազին, որ արդեն մոտեցել է իրեն՝ բարձր բռնած քողարկած սկիհր: Քահանան Սուրբ Սեղանը և սկիհր խնկարկելուց հետո, սարկավազի հետ, փոխն ի փոխ, փառաբանական խոսքեր արտասանելով՝ վերցնում է սկիհր սարկավազից, դառնում ժողովրդին. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, օրհնութիւն ի բարձունս...»: Այնուհետև քահանան լվանում է իր մատները, որպես մաքրության և անարատության նշան, որովհետև սրանից հետո իր մատներով պիտի դիպչի Սուրբ Մարմնին և Արյանը: Բայց Ասորական Եկեղեցում քահանայի աղոթքներից երևում է, որ պետք է մաքրել մտքերն ու ուղեղը, որպեսզի արժանի լինենք մոտենալ Սուրբ Ընծաներին: Ասացինք, որ Հայ Եկեղեցում քահանան լվանում է ձեռքերը մինչ կղիպչի Սուրբ Ընծաներին: Հարկ ենք համարում նշել, որ Ասորական Եկեղեցում քահանան երբեք իր ձեռքերը խորանում չի լվանում, այլ միայն սարկավազատանը, քանզի խորանում արգելվում է ջուր մտցնել, որովհետև ջրով արձակվում են բոլոր սրբացված առարկաներն ու վայրերը:

#### զ. Նիկիական հավատո հանգանակը՝ որպես պատարագի բաղադրիչ մաս

Քահանայի «Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսը լինի մեզ բոլորիս հետ Իր շնորհով և շոայլություններով հավիտյանս հավիտենից ամեն» աղոթքից հետո հոգևոր դասը

<sup>59</sup> NARSAI Doctoris syri HOMILIAE et CARMINA , Ibid. p. 92

կանգնում է խորանի կենտրոնում և երգում հավատո հանգանակը: Ստորև ներկայացնում ենք Ասորական Եկեղեցու և Հայ Եկեղեցու կողմից օգտագործվող հանգանակները:

### **Արևելքի Ասորական Եկեղեցու Նիկիական Հավատո Հանգանակ**

Հավատում ենք մեկ Աստծո՝ ամենակալ Հորը, երևելիների և աներևույթների Արարչին: Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց՝ Միածին: Նա, որ Հորից ծնվեց բոլորից առաջ, բայց չարարվեց: Աստված ճշմարիտ՝ ճշմարիտ Աստծուց: Նույն ինքը՝ Հոր բնությունից, որի ձեռքերով ստեղծվեցին բոլոր ժողովուրդները և ամեն ինչ: Նա, որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար, իջավ երկնքից և մարմնացավ Սուրբ Հոգուց և դարձավ մարդ և հղացավ ու ծնվեց Կույս Մարիամից: Չարչարվեց և խաչվեց Պոնտացի Պիղատոսի գահակալության օրերին, թաղվեց, երրորդ օրը Հարություն առավ ինչպես որ գրված է: Բարձրացավ երկինք, նստեց Հոր աջ կողմում: Նորից գալու է՝ դատելու ողջերին և մահացածներին: Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ ճշմարիտ Հոգուն, որ Հորից է բխում, կենդանացնող Հոգի է: Հավատում ենք նաև մեկ, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցուն, դավանում ենք մի մկրտություն՝ մեղքերի քավության համար, մարմինների հարություն, և հավիտենական կյանք:

### **Հայ Առաքելական Եկեղեցու Նիկիական Հավատո Հանգանակ**

Հավատում ենք մեկ Աստծո, ամենակալ Հորը, որ արարիչն է երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների: Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց՝ Միածին, այսինքն Հոր էությունից: Աստված Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած: Նույն ինքը Հոր բնությունից, որով եղավ ամեն ինչ, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա՝ տեսանելի և անտեսանելի: Որ մեր՝ մարդկանց և մեր փրկության համար իջնելով երկնքից՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որով առավ մարմին, հոգի և միտք և ամեն ինչ որ կա մարդու մեջ, ճշմարտապես և ո՛չ թվացյալ: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում: Պիտի գա նույն մարմնով և Հոր փառքով՝

դատելու կենդանիներին և մեռածներին, որի թագավորությունը վախճան չունի: Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, անստեղծ և կատարյալ, որ խոսեց Օրենքի, Մարգարեների և Ավետարանների մեջ: Որ իջավ Հորդանանում, քարոզեց առաքյալներին և բնակվեց սրբերի մեջ: Հավատում ենք նաև միակ, Ընդհանրական և Առաքելական սուրբ Եկեղեցուն: Մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանի, երկնքի արքայության և հավիտենական կյանքի:

Քրիստոնեական կրոնի սուրբ հայրերը ստեղծեցին հավատո հանգանակներ, որպեսզի դիմակայեն բազմաթիվ հերետիկոսություններին: Այդ հանգանակներում թվարկվում էին այս կամ այն քրիստոնեական խմբի հիմնական վարդապետական դրույթները: Այսոք քրիստոնյաների մեծամասնությունը օգտագործում է միննույն հավատո հանգանակներ: Բայց, ինչպես տեսանք վերևում, Ասորի և Հայ Եկեղեցիներում գործածվող հանգանակների միջև կան որոշ տարբերություններ, որոնք, իհարկե, իրենցից չեն ներկայացնում լուրջ շեղումներ, ինչպես օրինակ FILIOQUE-ի նորամուծությունը՝ արված Կաթոլիկ Եկեղեցու կողմից: Այսպես, Ասորի և Հայ Եկեղեցիների հանգանակների միջև հիմնական տարբերություններն են, որ Հայ Եկեղեցու կողմից օգտագործվող հանգանակում չկա «Չարչարվեց և խաչվեց Պոնտացի Պիղատոսի գահակալության օրերին...», իսկ Ասորական Եկեղեցու հանգանակի մեջ Սուրբ Հոգու մասին դրվագը համառոտ է՝ ի տարբերություն Հայ Եկեղեցու: Քրիստոնեական սրբազան ավանդության մեջ վկայություն կա, որ առաքյալները գրել են հավատո հանգանակ, որն իր բովանդակությամբ շատ պարզ է, բայցևայնպես արտահայտում է քրիստոնեության հիմնական դրույթները: Այս հանգանակը հետևյալն է.

### **Առաքելական հանգանակ**

Հավատում եմ Աստծուն՝ Ամենազոր Հորը, երկնքի և երկրի Արարչին: Եվ Հիսուս Քրիստոսին՝ Նրա Միածին Որդուն, մեր Տիրոջը, Ով հղացավ Սուրբ Հոգով, ծնվեց Կույս

Մարիամից, տանջվեց Պոնտացի Պիղատոսի օրոք, խաչվեց, մահացավ և թաղվեց, իջավ դժոխք, երրորդ օրը հարություն առավ մեռելներից, բարձրացավ երկինք և նստեց Ամենագոր Հայր Աստծո աջ կողմում, այնտեղից կգա՝ դատելու ողջերին և մահացածներին: Հավատում եմ Սուրբ Հոգուն, Սուրբ Կաթողիկե Եկեղեցուն, սրբերի բարեխոսությանը, մեղքերի թողությանը, մարմնի հարությանը, հավիտենական կյանքի Ամեն:

Ըստ IV դարի ավանդության՝ այս հանգանակը կազմել են հենց առաքյալները Պենտեկոստեի օրը: Այսպես, Ասորական Եկեղեցու հանգանակը Պոնտացի Պիղատոսի հատվածով հավատարիմ է մնացել առաքելական հանգանակին: Հիմնական տարբերություններից է նաև այն, որ Ասորական Եկեղեցու հանգանակի մեջ չկա «որի թագավորությունը վախճան չունի» հատվածը: Այս բացթողում մեր կարծիքով պայմանավորված է նրանով, որ Արևելքի Ասորական Եկեղեցին անձանոթ էր Որոգինեսի կողմից առաջ քաշած *αποκαταστασις*-ի վարդապետությանը: Արևելքի Ասորական Եկեղեցին աշխարհագրական տեսանկյունից անջատված էր մնացած եկեղեցիներից, քանզի, ինչպես առաջին գլխում ասացինք, գտնվում էր Պարսկական տերության մեջ, և հնարավորություն չունեի հաղորդակից դառնալու Հռոմեական տերության մեջ տեղի ունեցող դավանաբանական բանավեճերին:

Ասորական Եկեղեցում «բարձրացավ երկինք, նստեց Հոր աջ կողմում...» խոսքերից հետո քահանան և սարկավագներից մեկը անցնում են ավանդատուն, որտեղ սարկավագը ջուր է լցնում քահանայի ձեռքերին՝ ի նշանավորումն ավետարանական այն դրվագի, երբ Պոնտացի Պիղատոսը լվանում է իր ձեռքերը՝ դրանով իսկ ցուցաբերելով իր ձեռնպահությունը Քրիստոսի խաչելությունից: Սակայն Հայ Եկեղեցում հավատամքը արտասանում է սարկավագը և քահանան այստեղ չի լվանում ձեռքերը: Երևի պատճառն այն է, որ Հայ Եկեղեցու հանգանակում չի հիշվում Պոնտացի Պիղատոսի անունը:

## 2.2 Հավատացյալների պատարագ

### ա. Աստվածապաշտության ձևեր Արևելքի Ասորական եկեղեցում

Երբ արդեն չմկրտվածներն ու չապաշխարածները դուրս են գալիս եկեղեցուց, սկսվում է պատարագի բուն մասը, որը բոլոր եկեղեցիների ծիսակարգում անվանվում է հավատացյալների պատարագ: Հավատացյալների պատարագը սկսվում է ծնկաչոքումներով, խոնարհումներով և ապաշխարական աղոթքներով: Արևելքի Ասորական եկեղեցու ծիսական պրակտիկայում գոյություն ունեն աղոթելու մի քանի ձևեր, որոնք պատարագի ընթացքում ցույց են տալիս խոնարհություն, աղաչանք: Դրանք են.

- *Մղաղթա (ܡܠܘܚܬܐ)*: Այդ կեցվածքի ժամանակ քահանան երեսնիվայր նստում է ծնկների վրա՝ կպցնելով գլուխը հատակին: Դա հարգանքի ցուցաբերման նշան է: Մեկ ուրիշի առջև ծնկի գալը նշանակում է ճանաչել նրա մեծությունն ու գերակայությունը: Ծնկելը մեծ խորհուրդ ունի իր մեջ, քանի որ աղոթքին ուղեկցող մի գործողություն է: Իսկ աղոթքը ոչ միայն հոգու և մտքի գործ է, այլև մարդու ամբողջ մարմնի: Դա մի գործողություն է, որում պետք է միաժամանակ մասնակցեն և՛ հոգին, և՛ մարմինը: Մարդը ծնկում է Աստծու առջև հնարավորինս չափ ներքև և գիտակցում է ստորության ողջ խորությունը: Բայց Աստված գրացող է: Մարդն ինչքան իրեն ցածրացնում է Աստծո առջև, այնքան վեր է դասվում ուրիշներից: Այդ ձևը գոյություն ունի նույնիսկ հինկտակարանյան ժամանակաշրջանից «Դավիթը մանկան համար աղաչեց Աստծուն. Դավիթը ծոմ պահեց ու գիշերը գետնին քնեց» (Բ Թագ. ԺԲ:ԺԶ), «Երբ Եզրասը, երեսի վրա ընկած գետնին, այս խոստովանությունն էր անում և ողբով աղոթում Տիրոջ առաջ, նրա մոտ հավաքվեց շատ մեծ բազմություն՝ տղամարդիկ և կանայք...» (Բ Եզրաս Ժ:Ա): Երբ ավարտվում է Նիկիական հավատո հանգանակը, մինչև սուրբ սեղանին հասնելը՝ քահանան հատուկ աղոթքի ուղեկցությամբ երեք անգամ ծնկում է սուրբ սեղանի առաջ: Երբ քահանան մոտենում է սուրբ սեղանին, երեք անգամ համբուրում է այն և նույնքան ծնկում: Այս ծնկաչոքումներով քահանան թողություն է խնդրում Աստծուց իր և ժողովրդի մեղքերի համար: Սակայն, երբ

քահանան պատարագի ժամանակ վերցնում է տապանաքար խորհրդանշող շուշփան, որը Քրիստոսի հարության նշանն է, քահանան այլևս չի ծնկաչոքելու, քանզի մեծ իրադարձություն է տեղի ունեցել: Ստացվում է, որ երեսի վրա ընկած աղոթելը խաստովանական աղոթքի բնույթ է կրում:

- *Քուշափան* (ⲬⲉⲱⲘ) խնդրողական աղոթքի ձև է: Այս աղոթքով քահանան հույս ունի Բարձրյալից ստանալ խնդրելիք բաները: Սա աղոթքի հատուկ ձև է, որտեղ քահանան ծածուկ կերպով Տիրոջից խնդրում է որևէ կոնկրետ բանի իրականացում: Այս աղոթքի ընթացքում քահանան նստում է աջ ծնկի վրա՝ մի փոքր խոնարհելով գլուխը և աջ ձեռքով բախում է կուրծքը՝ ի նշան անկեղծ խոստովանության: Այսպես այս դիրքով է ուղեկցվում, օրինակ, Յուփաթիին աղոթքը, որը ննջեցյալների հոգու հանգստության համար ծածուկ արտասանվող աղոթք է:
- *Գհանթան* (Ⲭⲁⲛⲧ) աղոթքի այն ձևն է, երբ քահանան խոնարհվում է այնպես, որ նրա մարմինը գոտկատեղից վերև լինի հորիզոնական դիրքում: Հայ առաքելական եկեղեցում այս դիրքը կոչվում է խոնարհում , իսկ Ռուս ուղղափառ եկեղեցում՝ земной поклон: Քահանան պետք է կատարի դրանք առանց շտապելու: Խոնարհումները աստվածապաշտության արտաքին գործողություններից են և օգտագործվում են քրիստոնեական եկեղեցում դեռևս հնագույն ժամանակներից: Նույնիսկ Հին կտակարանում ենք հանդիպում այսպիսի դրվագների. «Դանիելը երբ իմացավ, որ հրաման է եղել, մտավ իր տունը, իսկ նրա վերնատան պատուհանները բացված էին դեպի Երուսաղեմ: Օրական երեք անգամ նա ծնրադրում էր և աղոթում, գոհություն հայտնում իր Աստծուն, ինչպես առաջ էր անում» (Դան. Զ:Ժ): Կարող ենք նաև մեջբերել Նոր Կտակարանից հատված «Ահա թե ինչու ծնկի եմ գալիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ» (Եփես. Գ:ԺԴ)<sup>60</sup>:

Բացի վերոնշյալ աղոթածներից՝ Ասորական Եկեղեցում կա նաև բազկատարած աղոթքի ձև: Ի տարբերություն Ասորի Եկեղեցու՝ Հայ Էկեղեցում քահանան ծնկի է գալիս միայն մեկ անգամ, այն էլ երբ վարագույրերը փակ են լինում: Սակայն երկու եկեղեցիների ծիսական պրակտիկային էլ հատուկ են ծածուկ աղոթքները:

<sup>60</sup> Isaac J., Ibid. p. 61

**բ. Ողջույն**

Երբ գերեզմանաքարը գլորվել է Քրիստոսի գերեզմանից, կանայք գալիս տեսնում են, որ Քրիստոսի մարմինը այնտեղ չէ և հասկանում են, որ Տերը հարություն է առել: Հարությունից հետո Տերը գալիս երևում է աշակերտներին և ողջունում է նրանց: Այսպես, այս ավետարանական դրվագը նույնպես իր արտացոլումն է գտել պատարագի արարողակարգում, որը բնորոշ է բոլոր եկեղեցիների ծիսակարգին և անվանվում է Ողջույն (ܩܠܘܬܐ):

Ասորական եկեղեցում քահանան հավատամքին հաջորդող մի քանի ծնրադրումներից հետո դիպչում է սկիհին ու սարկավագին է տալիս Տիրոջ Ողջույնը: Սարկավագը, վերցնելով քահանայի ձեռքից Ողջույնը, ասում է. «Իրար ողջունեք Քրիստոսի սիրով», հետո ողջունում է մյուս սարկավագին և այդպես բոլորը ողջունում են իրար: Քրիստոսի սիրով իրար ողջունելու ժամանակ մարդ պետք է մաքրի իր սիրտը ամեն հիշաչարությունից, բարկությունից և դառնությունից: Այս ողջույնով հրեշտակներն ու առաքինի մարդիկ միանալու են իրար Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ: Այս ողջույնի մեջ չկա ո՛չ ձևականություն և ո՛չ էլ ատելություն, այլ միայն լույս և կատարյալ սեր: Երանելի է նա, ով սիրով կողջունի իր հավատակցին, քանի որ նա կստանա կատարյալ խաղաղություն:<sup>61</sup> Այդ պահին սարկավագը մի քարոզ է ասում . «Բոլոր կաթողիկոսների, եպիսկոպոսների, քահանաների և սարկավագների հիշատակի համար...» ծնկի եկած քահանան այդ ժամանակ *Յուփաթիին* (ܝܘܦܬܐܝܝܢ) կոչվող աղոթքն է ծածուկ ընթերցում: Յուփաթիինը ննջեցյալների և ողջերի աղոթք է, և քանզի պատարագը մատուցվում է ինչպես ողջերի, այնպես էլ ննջեցյալների համար, հենց այդ աղոթքով էլ ննջեցյալների հոգիների համար քահանան աղոթում, և եթե տվյալ թեմում ինչ որ մեկը մահացել է, ապա նրա անունն անպայմանորեն հիշվում է այդ աղոթքի մեջ<sup>62</sup>:

Հայ եկեղեցու ծիսակարգի համաձայն՝ սարկավագի «Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ՝ ահիւ...» քարոզից հետո սարկավագը թելադրում է ժողովրդին. «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր

<sup>61</sup> 31 19 '1828 'ԸՆԱՍ 'ԸՆՈՐ ՄԵՈՑ 'ՄԻՆ ,ԻՆ

<sup>62</sup> 45 19 '1828 'ԸՆԱՍ 'ԸՆՈՐ ՄԵՈՑ 'ՄԻՆ ,ԻՆ

սրբութեան...»: Հետո նույն սարկավագը Ողջույնը ներքև է բերում դասի մեջ կանգնած քահանաներին և դպիրներին՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» ասելով, իսկ ողջույն ստացողը պատասխանում է. «Օրհնեալ է յանտնութիւնն Քրիստոսի»: Հայ Եկեղեցում նույնպէս Ողջույնը տրվում է ժողովրդին և ամեն մի հավատացյալ այն փոխանցում է կողքինին՝ նույն խոսքերը կրկնելով, որով ամեն հավատացյալ իր հոգու մեջ խոստովանում է Քրիստոսի գաղափարի հայտնվելն ու հավատում: Այդ պահին ժողովուրդը համբույրով է ողջունում, իսկ դպիրները հաղթական ձայնով երգում են. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցավ... » Ինչ վերաբերում է ննջեցյալների համար ասված աղոթքին, Հայ Եկեղեցու ծեսում այն նույնպէս գոյություն ունի: Խնդրանքներից հետո քահանան հիշատակությունների աղոթքներ է անում<sup>63</sup>:

#### գ. Ընծաների սրբագործում

*Յուփատխին* կոչվող աղոթքից հետո քահանան մեկ այլ *քուշափա* է ասում «Տե՛ր Աստված Զորեղ (2 անգամ), Քո գթությամբ և շնորհով օգնի՛ր իմ տկարություններին...» Այնուհետև քահանան կանգնում է ուղիղ և վերցնում է կիսաբաց շուշփան ու դրանով շրջափակում է սկիին ու մաղզման, հետո խունկ է լցնում բուրվառի մեջ, սարկավագի ձեռքից վերցնում է բուրվառը և խնկարկում ընծաները: Քահանայի մի քանի աղոթքներից հետո սարկավագներն ու ժողովուրդը երգում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ է գորությունների Տերը: Լի են երկինքն ու երկիրը նրա փառքով: Օսաննա<sup>64</sup> բարձունքներում, Օսաննա Դավթի որդուն: Օրհնյալ է նա, ով գալիս է Տիրոջ անունով, Օսաննա բարձունքներում»: Այնուհետև նորից է ծնկի իջնում ու քուշափա ասում: Այդ երգի ժամանակ քահանան, ձեռքերը խաչաձև դրած կրծքին, ամեն Սուրբ բառի հետ խոնարհվում է Սուրբ Սեղանի երեք կողմերում ու ծնկում՝ մեկ այլ քուշափա ասելով: Քուշափայի ավարտից հետո քահանան վեր է կենում ու ասում. «Օրհնի՛ր Տեր (3 անգամ) եղբայրնե՛ր, աղոթե՛ք ինձ համար»: Սարկավագը

<sup>63</sup> Վազգեն վարդապետ, Մեր պատարագը, Բուխարեստ, 1945թ., էջ 61

<sup>64</sup> Օսաննա (ܐܘܨܢܢܐ) բառը եբրայերենում նշանակում է փրկում էր, օգնում էր: Այս բառերով էին Երուսաղեմում հավաքվածները ողջունում Քրիստոսին: Ի դեպ՝ Արևելքի Ասորական Եկեղեցում Ծաղկազարդը կոչվում է Օսաննայի կիրակի (ܐܘܨܢܢܐ ܐܘܨܢܢܐ):







գրությունը մեզ ճանապարհ է բացում այս փառավոր, սուրբ, կենդանացնող և աստվածային Խորհուրդներին, չնայած որ մենք արժանի չենք՝ խոսքերին ժողովուրդը պատասխանում է. «Ճշմարիտ, Տեր մեր, արժանի չենք, մեր եղբայրները նույնպես, Տեր, արժանի չեն՝ մեր անխելքության ու բազում մեղքերի համար»: Այս երկխոսությունը 3 անգամ է երգվում քահանայի և ժողովրդի կողմից: Դրանից հետո քահանան երկու ձեռքերով վերցնում է վերևի նշխարը<sup>70</sup>, բարձրացնում գլխավերևում ու ասում. «Տե՛ր մեր Հիսուս Քրիստոս, փառք Քո անվանը և Քո մեծությանը խոնարհում միշտ և հավիտյանս: Քանի որ սա կենդանի և կենդանացնող Հաց է, որ իջավ երկնքից և տալիս է Կյանք ամբողջ աշխարհին: Այն ուտողները չեն մահանում և այն ընդունողները փրկվում են դրանով և չեն ապականվում և ապրում են դրանով հավիտյանս»: Քահանան առանց շրթունքներին դիպցնելու սիմվոլիկ կերպով համբուրում է նշխարը, այնուհետև դրանով խաչակնքում իրեն 3 անգամ՝ ամեն անգամ փառք տալով Տիրոջը: Այնուհետև քահանան երկու ձեռքերի 4 մատներով պահում է նշխարը իր գլխավերևում ու աղոթում: Աղոթքի ժամանակ Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձին հիշատակելով՝ 3 անգամից բեկում է նշխարը: Այստեղ նշխարի բեկումը ցույց է տալիս, որ Քրիստոս էլ մեզ նման մարդ էր և մահացավ ինչպես մարդ: Դրանից հետո այն մասը, որը գտնվում է քահանայի ձախ ձեռքում, դրվում է մաղզմայի վրա այնպես, որ նրա բեկված մասը լինի սկիհի կողմը: Այնուհետև այն մասը, որը գտնվում է նրա աջ ձեռքում, բեկված մասով թաթախում է գինու մեջ և դրանով գինու խաչակնքում է արևելքից արևմուտք, հյուսիսից հարավ: Ապա քահանան ասում է. «Դրոշմվում է թանկագին Արյունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ Մարմնով, հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու ամեն»: Այնուհետև քահանան դրոշմում է մաղզմայի վրա եղած նշխարը այդ վերոնշյալ նշխարով ու ասում. «Դրոշմվում է սուրբ Մարմինը Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի քավիչ Արյամբ, հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու ամեն»: Այնուհետև երկու մասերը վերցնելով՝ քահանան դրանք նորից միացնում է իրար ու ասում. «Բաժանված, սրբացված, կատարյալ, ավարտած, միացրած և մեկը մյուսի հետ խառնած այս փառավոր, կենդանացնող և աստվածային Խորհուրդները...» Ապա ասում է. «Այժմ և միշտ...»

<sup>70</sup> Լատիներենում՝ *Superiorem Oblatam*, այսինքն նշխարի կարևոր մասը կամ Սուրբ Գառը (ܩܘܪܘܥ) Տե՛ս, Карабинов И. А, укз. раб. стр. 33

ապա աջ ձեռքի բութ մատով մի փոքր անցք<sup>71</sup> է բացում բեկված նշխարի այն մասի վրա, որը գինու մեջ էր թաթախվել: Երկու իրարից բաժանված մասերի իրար կպցնելը խորհրդանշում է, որ Տերը մարդու նման մահացավ և Աստծո նման հարություն առավ: Այնուհետև երկու մասերը կրկին խաչաձև իրար վրա է դնում մաղզմայի վրա այնպես, որպեսզի ծակված մասը լինի դեպի սկիհը: Այնուհետև քահանան իր ճակատը, հետո սարկավագների ճակատները բութ մատով խաչակնքում է: Դրանից հետո քահանան վերցնում է շուշփան Ընծաների վրայից, որը նշանակում է, որ Քրիստոս համբարձվեց: Այդուհետ վարագույրը բացվում է, և սարկավագը հորդորում է հավատացյալներին, որ նրանք ապաշխարեն և մաքրեն իրենց սրտերը ամեն չարից ու ակնածանքով մոտենան Սուրբ Խորհուրդներին: Այդ խնդրանքի ընթացքում քահանան մի այլ ծածուկ աղոթք է ասում, այնուհետև վեր կենում ու ասում. «Թու՛յլ տուր, Տե՛ր մեր և Աստված մեր, միշտ Քո առջև կանգնել անկեղծորեն ու մաքուր սրտով...» Այս աղոթքից հետո բոլորը միասին երգում են. «Հայր մեր...» , այնուհետև քահանան ասում է. «Խաղաղություն ձեզ հետ», իսկ ժողովուրդը պատասխանում է. «Քեզ հետ և քո հոգու հետ»: Քահանան շարունակում է. «Սուրբը սրբերին...<sup>72</sup>» Ժողովուրդը պատասխանում է. «Մեկ Սուրբ Հայր, մեկ Սուրբ Որդի, մեկ Սուրբ Հոգի. Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն»:

Հայ եկեղեցում այս գործընթացը կոչվում է Վերացում: Այստեղ քահանան չի բեկում նշխարը, այլ թաթախում է ամբողջությամբ գինու մեջ<sup>73</sup>: Մեր կարծիքով այս կարգի մեջ է նաև երևում երկու եկեղեցիների քրիստոսաբանական առանձնահատկությունները. այն է՝ Ասորական Եկեղեցին ընդունում է երկու բնություն և դրանով է պայմանավորված նշխարի բեկումը երկու մասի, իսկ Հայ Եկեղեցին ընդունում է մեկ՝ Աստվածամարդկային բնություն և այդ պատճառով էլ չի կիսում նշխարը, այլ ամբողջությամբ ընկղմում է գինու մեջ:

---

<sup>71</sup> Ծակած մասը պետք է լինի դեպի սկիհը, իսկ բեկված մասը՝ դեպի քահանան: Դա բացատրվում է նրանով, որ հռոմեացի զինվորը գեղարդով ծակեց Քրիստոսի կողը:

<sup>72</sup> Հայ Եկեղեցում՝ «Ի սրբութիւն սրբոց»: Տե՛ս, Վազգեն վարդապետ, նշվ աշխ., էջ 45

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 97





ձեռքերի խաչի վրա ենք վերցնում Տիրոջ մարմինը ու սիրով գրկում ու թաղում մեր մարմիններում և Նրա հետ հարություն առնում: Երբ վերջանում է հաղորդությունը, սարկավազը մի կարճ քարոզ է ասում ու հոգևոր դասը նորից բարձրանում է խորան<sup>79</sup>:

Հայ Եկեղեցու հաղորդության կարգը, սակայն, մի քիչ տարբերվում է Ասորականից: Քահանայի «Լրումն Հոգւոյն Սրբոյ» աղոթքից հետո, մինչ վարագույրը փակ է, պատարագիչը Սուրբ Մարմնից մի մաս է ճաշակում, որից հետո ըմպում է բաժակից: Քահանայի հաղորդվելուց հետո կարող են հաղորդվել նաև նրանք, ովքեր քահանայից դասից են: Դրանից հետո խորհրդատեսություն ասվում է. «Եւ սարկավագն հաղորդեսցի»: Այստեղ հիշված սարկավազը նա է, ով վերաբերում է կատարում: Սրբություններին մոտենալու պատճառով պահանջվում է, որ նա ևս քահանայի նման ինքն իրեն պատրաստի խոստովանությամբ և ապաշխարությամբ: Եվ քանի որ արարողության մի մասն ինքն է կատարում, պետք է նա էլ հաղորդվի: Սակայն դժբախտաբար այս օրենքը դադարել է երկար ժամանակ ի վեր<sup>80</sup>: Սակայն ինչպես վերևում տեսանք, ասորական եկեղեցում այս սովորույթը պահպանվել է մինչ օրս: Ինչ վերաբերում է հավատացյալների հաղորդությանը, ապա հայ եկեղեցում նույնպես հաղորդվում են նրանք, ովքեր նախապես խոստովանել են և մաքրել են իրենց հոգին<sup>81</sup>: Տարբերությունը նրանում է, որ Հայ Եկեղեցում հավատացյալները ձեռքերը բուրվառին չեն մոտեցնում, և Մարմինն ու Արյունը առանձին առանձին չեն ճաշակում. քահանան՝ սկիհը ձեռքին, առաջանում է դեպի բեմի եզերքը, ծնկի գալիս և Արյունով թաթախված Սուրբ Մարմնից մի կտոր վերցնելով՝ հավատացյալի լեզվին է դնում: Հավատացյալը չպետք է ծամի նշխարը, այլ՝ կուլ տա:

## **Է. Գոհություն և արձակում**

Ասորական Եկեղեցում քահանայի երկու գոհաբանական աղոթքներից հետո բոլորը միասին երգում են Տերունական աղոթքը: Տերունական աղոթքից հետո

<sup>79</sup> 58 Ե1830, Ե1500, «Բնակ ծագ առա ռեւո ռեւաւո ռեւոս ռեւոյ»

<sup>80</sup> Անձնացի Խ., Սուրբ պատարագի մեկնություն, Էջմիածին, 2001, էջ 89

<sup>81</sup> Արճիշեցի Հ., նշվ. Աշխ. էջ 54

քահանան գալիս կանգնում է խորանի դռան մոտ՝ աջ կողմում ու բարձրացնելով ձեռքի խաչը հավատացյալների վրա, որոնք գլուխները խոնարհած կանգնած են, ասում է արձակման աղոթքը՝ *խոթաման* (ՔՃԹՁ): Այս աղոթքը նույնպես փոփոխական բնույթ է կրում: Դրանից հետո քահանան իջնում է բեմի վրա ու բոլորը երգում են. Երրորդություն (ՔՃԹՁԹԹ) երգը: Այս երգի ընթացքում հավատացյալները նույն կարգով, ինչպես հաղորդվելու ժամանակ էին եկել, գալիս են ու համբուրում քահանայի ձեռքի խաչը: Երբ բոլորը համբուրում են քահանայի խաչը, քահանան խաղաղություն է մաղթում հավատացյալներին ու շնորհավորում նրանց՝ Սուրբ Խորհուրդներին մասնակցելու առթիվ: Հետո հավատացյալները դուրս են գալիս եկեղեցու բակ ու շնորհավորում միմյանց: Հոգևոր դասը բարձրանում է խորան, վարագույրը փակվում է: Հոգևոր դասը նորից է հաղորդվում, որից հետո քահանան երեք գոհաբանական աղոթք է ասում, հետո շուտ է գալիս դեպի սարկավագները, որոնք կանգնած են այդ պահին խորանի կենտրոնում, ու սարկավագների համար կարդում է արձակման աղոթք: Հոգևոր դասը, երեք անգամ համբուրվելով, շնորհավորում է իրար: Այնուհետև հոգևոր դասը մտնում է ավանդատուն, և քահանան հատուկ աղոթքներով արձակում է մաղզման ու սկիհը, որից հետո հատուկ աղոթքների ուղեկցությամբ հանում են հանդերձանքը<sup>82</sup>:

Հայ Եկեղեցում հավատացյալների հաղորդվելուց հետո քահանան ճաշակում է սկիհի մեջ մնացած Մարմինն ու Արյունը, սկիհը մաքրում, սքողում է՝ ծածուկ ասելով մի գոհաբանական աղոթք: Պատարագիչը, գոհության աղոթք ասելուց հետո, դարձյալ լվանում է իր ձեռքերը և սաղավարտը դնում գլխին: Մեկ այլ աղոթքից հետո, որը վերագրվում է Հովհան Ոսկեբերանին, քահանան, Ավետարանը ձեռքին, իջնում է ներքև, դեմքը խորանին է դարձնում ու ասում մեկ այլ աղոթք: Պատարագի բուն խորհուրդն արդեն ավարտվել է: Բայց մինչ հավատացյալները կգնան, քահանան ընթերցում է Հովհանու Ավետարանի Ա գլխի 1-14 համարները: Այնուհետև պատարագիչը, օրհնելով, խաղաղությամբ արձակում է ներկաներին և ասում. «Օրհնեալ եղերուք ի շնորհաց»: Այս պահին նրանք, ովքեր փափագում են համբուրել Սուրբ Ավետարանը, մոտենում են և հավատով համբուրում՝ «Մեղա Աստծո» ասելով,

<sup>82</sup> .53.Ձ1830.ՎՃԹՁ, ՔՃԹՁԹԹ, ՔՃԹՁԹԹ, ՔՃԹՁԹԹ, ՔՃԹՁԹԹ, ՔՃԹՁԹԹ



որին պատարագիչը պատասխանում է «Տերը թող քեզ տա քո սրտի համեմատ, և քո բոլոր բարի խորհուրդները թող ինքը կատարի, ամեն<sup>83</sup>»:

---

<sup>83</sup> Իգնատոսյան Վ. ծ. վրդ., նշվ աշխ. էջ 87

## Վերջաբան

Սույն աշխատանքում ներկայացնելով Արևելքի Ասորական Եկեղեցու պատմությունը՝ պարզեցինք, որ սխալ է այս եկեղեցին անվանել «նեստորական», քանի որ Նեստորը չէր, որ հիմնադրեց այն և նա չէր, որ նորամուծություն արեց այս եկեղեցու քրիստոսաբանության մեջ, այլ այսպիսի քրիստոսաբանական հայացքներ ուներ այս եկեղեցին Նեստորի ծնունդից շատ առաջ: Ավելին, այս եկեղեցու կողմից Նեստորը պաշտոնապես ցայսօր ո՛չ նգովված է և ո՛չ էլ ընդունված է: Նման թյուր կարծիք ունի նաև ռուս ուղղափառ եկեղեցին հայ առաքելական եկեղեցու մասին՝ անվանելով նրան «գրիգորյան»՝ դրանով իսկ ժխտելով վերջինիս առաքելահաստատ լինելը:

Ինչ վերաբերում է Հայ և Ասորական եկեղեցիների ճարտարապետությանը, ապա պետք է նշել, որ դրանք ունեն և՛ տարբերություններ, և՛ ընդհանրություններ: Ասորական Եկեղեցու տաճարների կառուցվածքը բազիլիկ ձև ունի, իսկ Հայ Եկեղեցին՝ և՛ բազիլիկ և՛ կաթողիկե: Բայց ներսից բավականին տարբերություններ կան երկու եկեղեցիների միջև (Տե՛ս հավելվածում):

Անդրադառնալով երկու եկեղեցիների պատարագներին՝ պետք է ասել, որ բավականին տարբերություններ կան երկու եկեղեցիների ծիսակարգում, որոնք պայմանավորված են տվյալ եկեղեցիների ինչպես քրիստոսաբանությամբ, այնպես էլ լեզվամտածողությամբ: Ասորական եկեղեցու աչքի ընկնող առանձնահատկություններից է թթխմորի կիրառումը նշխարի խմորը հունցելու ժամանակ, գինու մեջ ջուր խառնելը, սպասքի պատրաստման կարգը, հոգևոր դասի հանդերձանքը, Սուրբ Աստված օրհներգության «որ խաչեցար»-ի հավելումի բացակայությունը, ընթերցումների կարգը, աստվածապաշտության արտաքին ձևերը, Ընծաների Սուրբ Սեղանի վրա դնելը, «ով չմկտրվեց (Հայ Եկ. Մի ոք յերախայից) » երգի ժամանակ գործողությունները, հանգանակի տեքստը, վերջինիս ժամանակ քահանայի ձեռքերի լվացումը, որը Հայ Եկեղեցում կատարվում է մինչ խորան բարձրանալը, քահանայի աղոթքների փոփոխական լինելը, սարկավագի քարոզները, Ողջույնը, Ընծաների սրբագործումը, Ընծաների բեկումը, խոստովանությունը, Հաղորդությունը և այլն: Չնայած վերը թվարկած բոլոր կետերում եղած

առանձնահատկություններին՝ երկու եկեղեցիների պատարագի բուն կառուցվածքն ու խորհուրդը նույնն է: Այս առթիվ կարելի է մեջ բերել Ներսես Լամբրոնացու այն միտքը, որ պետք է եղբայրություն և համերաշխություն քարոզել բոլոր ազգերի միջև: Ըստ նրա՝ ամեն ազգ իր եկեղեցում միաժամանակ աղոթում է մյուս ազգերի բարեկեցության և խաղաղության համար: Թեև տարբեր ազգեր Պատարագը կատարում են տարբեր լեզուներով, ազգային ծեսերով, այն իր բովանդակությամբ համաքրիստոնեական է՝ «Խորհուրդ պատարագին համահաւասար է ամենայն ազգացս»:<sup>84</sup>

---

<sup>84</sup> Մաթևոսյան Ա., Ներսես Լամբրոնացի, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 783

## Օգտագործած գրականության ցանկ

1. Անձևացի Խ., Սուրբ պատարագի մեկնություն, Էջմիածին, 2001թ.
2. Գաթրճեան Վ., Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վիեննա, 1897թ
3. Իգնատոսյան Վ. ծ. վրդ., Մեր Ս. Պատարագը, Անթիլիաս-Լիբանան, 1977թ.
4. Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցիոյ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1880թ.
5. Արճիշեցի Հ., Մեկնություն պատարագի, Էջմիածին, 1999թ.
6. Մաթևոսյան Ա., Ներսես Լամբրոնացի, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002
7. Վազգեն վարդապետ, Մեր պատարագը, Բուխարեստ, 1945թ.
8. Վազգեն վարդապետ, Պատարագամատոյց, Բուխարեստ 1945 թ.
9. Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908
10. Օրմանյան Մ., Ազգապատում, Հատոր Ա, Բեյրութ, 1959
11. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992թ
12. Карабинов И. А., Собрание древних литургий, Москва, 2007
13. Пигулевская Н. В., Культура сирийцев в средние века, Москва, 1979
14. Робертсон Р., Ассирийская Церковь Востока, Москва, 2001
15. Селезнев Н. Н., Ассирийская Церковь Востока, исторический очерк, Москва, 2003
16. Селезнев Н. Н., Христология Ассирийской Церкви Востока, Москва, 2002
17. Ушанова Л., Музыкальные стили чинопоследования литургии Аддая и Мари в Ассирийской Церкви Востока, Вестник РАМ им. Гнесиных, 2009 №2
18. Baumstark A., Comparative Liturgy, Oxford, 1958
19. Baumer C., The Church of the East. An illustrated history of Assyrian christianity, London, 2004
20. Chorbishop Birnie M. J., The Eucharist in the Church of the East, Sixth non-official consultation on dialogue within the Syriac Tradition, PRO ORIENTE, Vienna, vol. 6
21. Mar Odishoo metropolitan, Marganitha, translated by His Holiness Mar Eshai Shimun XXIII, Chicago, 1988

22. Wigram W. A., An introduction to the history of the Assyrian Church or Church of the Sassanid empire 100-640 A.D, London, 1909
23. ABBELOOS, Acta S. Maris, 1885; DUVAL, R., La litterature syriaque.-Paris,1900
24. Isaac J., La messe chaldeenne, etude historique, Baghdad, 1982
25. Corpus scriptorium christianorum orientalium, curantibus I.B.Chabot, I.Guidi,H.Hyvernat, SCRIPTORES SYRI, Textus series tertia – Tomus XCI, Anonymi auctoris, Edidit R.H.Connolly O.S.B, Parisiis, MDCCCCXI
26. NARSAI Doctoris syri HOMILIAE et CARMINA primo edita cura et studio D.ALPHONSI MINGANA professoris lingue syriace in seminario fratrum praedicatorum mausiliensi cum praefatione editoris, volumen I, Mausilii 1905
27. RENAUDOT E. Liturgiarum Orientalium Collectio. 2 vol. Parisii, 1715-1716. Editio secunda correctior. Baer, Francoufurti ad Moenum, 1847
28. 1966, 'לעזא דעס וועלכע בעטן דאס שטעלען, באגראם דעם סאגראד, נעמא, 1966
29. 1830, 'לעזא דעס וועלכע דעלעטען, סעצא נעם וועלכע מעלעטען, סעצא ד, 1830
30. 1998, 'זו, לעזא דעס בעלפעלעך, באגראם דעם וועלכע, סעצא ד, 1998
31. 1828, 'זו, נעם, פאעם און א, נעמא, 1828
32. 'זו, סעצא דעס בעלפעלעך דעם סאגראד, זו לעזא דעם סעצא נעם וועלכע, מעלעטען, סעצא ד, 1835
33. 'זו, סעצא נעם סאגראד נעם, סעצא דעם סעצא נעם וועלכע באגראם דעם סעצא נעם וועלכע, סעצא ד, 2004